

## ԹԵՂԵՂԱԿՆԵՐԻ ՄԵՋ ԱՍԹԱՆԱՅԻ ԳՈՐԾԵՆԹԱՅԻ ԵՐԱՇԽԱԽՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՎ «ՅԱՐԳԵԼ ՍՈՒՐԻՈՅ ՏԱՐԱԾԵՔԱՅԻՆ ԱՄԲՈՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ, ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԵՐՋ ՏԱԼ ԱԶԱԲԵԿՉՈՒԹԵԱՆ»

Երեքշաբթի, 29 Յուլիսին, Իրանի մայրաքաղաք Թեհրանի մեջ գումարուած Ասթանայի գործընթացի երաշխաւոր երկիրներու՝ Ռուսիոյ, Իրանի եւ Թուրքիոյ նախագահներու գագաթնաժողովին քննարկուեցան Սուրիոյ տագնապի քաղաքական լուծման հեռանկարները:

Նախագահները հանդէս եկան միատեղ յայտարարութեամբ, հաստատելով հետեւեալները՝

- Ռուսիան, Իրանն ու Թուրքիան կը մերժեն Սուրիոյ դէմ միակողմանի բոլոր պատժամիջոցները:
- Սուրիական հակամարտութիւնը զինուորական լուծում չունի:
- Ռուսիան, Իրանն ու Թուրքիան հաւատարիմ կը մնան Սուրիոյ տարածքային ամբողջականութեան ու միասնականութեան, անկախութեան ու գերիշխանութեան:



Կը դատապարտեն Սուրիոյ մէջ ահաբեկչական կազմակերպութիւններու աճող ներկայութիւնն ու գործունէութիւնը, ինչպէս նաեւ երկրի մէջ ահաբեկչութեան դէմ պայքարի անուան տակ ինքնակառավարման ապօրինի նախաձեռնութիւնները:

Յայտարարութեան մէջ խստիւ դատապարտուեցան սուրիական հողերուն վրայ Իսրայելեան իրարայաջորդ յարձակումները, որոնք ոչ միայն Սուրիոյ, այլեւ ամբողջ տարածաշրջանին խաղաղութիւնը կը խախտեն:

Իտլիպի եւ սուրիական այլ շրջաններու մէջ զինեալ ահաբեկչական խմբաւորումներու գոյութիւնը մտահոգիչ նկատելով, երեք նախագահները հարկ համարեցին, որ բոլոր պետութիւնները միաւորեն իրենց ջանքերը եւ Սուրիոյ մէջ ահաբեկչութեան հոսքը դադարեցնեն:

Անոնք կարեւոր համարեցին նաեւ Սուրիոյ ժողովուրդին տրամադրուած օգնութիւնները շարունակել եւ մեղմացնել անոր տառապանքը՝ տնտեսական վատ պայմաններու լոյսին տակ:

Հրատապ համարուեցաւ նաեւ այլ երկիրներ ապաստանած սուրիացի տեղահանուածներու տունդարձին խթանումը:

Գագաթնաժողովը լուսարձակի տակ առաւ սուրիական ճեգիրի իրավիճակը եւ անհրաժեշտ նկատեց շրջանին սուրիական պետութեան վերահսկողութեան տակ առնուիլը:

Նախագահ Փութին կոչ ուղղեց Միջազգային Ընկերութեան՝ Սուրիոյ ժողովուրդին մարդասիրական օգնութիւնները բազմապատկելու, ինչպէս նաեւ երկրի դպրոցները, հիւանդանոցներն ու երթակառուցները վերականգնելու:

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ՄՏԱՀՈԳԻՉ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ԹՈՒՐԻԱ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՍՈՒՐԱՏ ՓԱՓԱԳԵԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՈՒՏՔԻ ԱՐԳԻՆՈՒՄԸ»

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը կատարած է դիմատետրեան գրառում մը, որուն մէջ անդրադարձած է հայ-թրքական յարաբերութիւններուն, ինչպէս նաեւ ՀՀ Բիւրոյի անդամ Մուրատ Փափագեանի մուտքը Հայաստան արգիլելու հարցին:



Գրառումին մէջ կը նշուի. «Մտահոգիչ են վերջին օրերուն Հայաստանէն ներս տեղի ունեցող զարգացումները, յատկապէս Հայաստան-Թուրքիա բանակցութեան, ինչպէս նաեւ ՀՀ Բիւրոյի անդամ Մուրատ Փափագեանի Հայաստան մուտքի արգիլման գծով: Նման երեւոյթներ կրնան բացասական հետեւանքներ ունենալ՝ մասնաւորաբար Սփիւռք-Հայաստան յարաբերութեան վրայ: Անհրաժեշտ է, որ յստակ ու ամբողջական տեղեկութիւններ փոխանցուին հանրութեան»:

## ՅԱԿՈԲ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒԲԵԱՆ. «ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԵ ԱՐՃԱՄԻ ԻՐԱՌԻՔՆԵՐԸ ՈՐԵՒԷ ՆԱՀԱՆՋ»

12-էն 14 Յուլիսին Արցախ այցելած էր ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տեր Խաչատրեան: Արցախ այցելութեան առաքելութիւնը հիմնականին մէջ երկու ուղղութեամբ էր. նախ՝ քաղաքական հանդիպումներ Արցախի պետական տարբեր օղակներու պատասխանատուներուն հետ Արցախի կացութեան, տագնապի եւ օժանդակութեան առնչութեամբ, եւ ապա՝ ներքին կազմակերպական հարցեր, որոնք կը ներառին Կեդրոնական Կոմիտէի հետ որոշ աշխատանքներու ծրագրում, հանդիպումներ ՀՀ-ի շարքերուն հետ:



Այցելութեան ընթացքին ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչը հանդիպումներ ունեցած է Արցախի Հանրապետութեան նախագահին, պետական նախարարին, արտաքին գործոց նախարարին, Անվտանգութեան խորհուրդի քարտուղարին, մարդու իրաւունքներուն պաշտպանին, ինչպէս նաեւ Արցախի Հանրապետութեան խորհրդարանին մէջ ներկայացուած քաղաքական գործընկեր ուժերու առաջնորդներու հետ: Արցախի իշխանութեան ներկայացուցիչներուն հետ քննարկուած են Արցախի հարցով Հայաստանի Հանրապետութեան կողմէ վարուող բանակցութիւններուն վերաբերեալ Արցախի

Շար.՝ 12 3 ➔

## ՀՀ ԲԻՐՈՅԻ ԱՆԴԱՄ ՍՈՒՐԱՏ ՓԱՓԱԳԵԱՆԻՆ Կ'ԱՐԳԻՆՈՒ ՀԱՅԱՍՏԱՆ ՄՆԵԼ

Փաշինեանի հրամանով՝ Ֆրանսայի հայկական կազմակերպութիւններու համակարգող խորհուրդի համանախագահ, ՀՀ Բիւրոյի անդամ եւ Հայ դատի գործիչ Մուրատ Փափագեանին 14 Յուլիսի երեկոյեան արգիլուած է Հայաստան մուտք գործել՝ իբրեւ անցանկալի անձ:



Իր եջին վրայ յաւելեալ մանրամասնութիւն տալով՝ Մ. Փափագեան յայտնած է, որ ոստիկանութիւնը արգիլած է իր Հայաստան մուտքը, գրաւած է անձնագիրը, մինչեւ դէպի Ֆրանսա յաջորդ թռիչքը:

Քը զինք պահած է փոքր սենեակի մը մէջ: «Գիտէի, որ Ատրպէյճան եւ Թուրքիա մուտքս արգելուած է, եւ հիմա իմացայ նաեւ, որ արգելուած է Փաշինեանի կողմէ՝ Հայաստան...»

«Հայաստանի, հայութեան ու Հայ Դատի համար 40 տարուան պայքարէ ետք նման վերաբերմունքի «արժանանալը» ուղղակի ցաւ կը պատճառէ ինձի: Նիկոլ Փաշինեանի այս որոշումը յաւելեալ փաստ է, որ ան իրեն տրուած պատասխանատուութեան բարձրութեան վրայ չ'է: Ան ուժեղ հարուած կու տայ, երբ իր ոստիկանութեան կը պահանջէ Հայ Դատի գործիչը վտարել, բայց կը պատկերացնէ՞ք, որ այս փոքրիկ դեկավարը բանակի՞ն էրտողանի եւ Ալի-Ելի հետ: Ուշ կամ կանուխ Հայաստանի ժողովուրդը պիտի համոզուի, որ պէտք է ձեռքբազատի այս դեկավարէն, որ ամէն ծիգ ի գործ կը դնէ Հայաստանը տկարացնելու համար: Սփիւռքը նոյնպէս կը հասկնայ ասիկա: Բայց արդէն ժամանակն է ըսելու՝ կանչ առ», կը գրէ ՀՀ Բիւրոյի անդամը:



### Խմբագրական

### ԹԵՐԱՆԻ ԳԱԳԱԹՆԱԺՈՂՈՎԸ ԿԱՐՄԻՐ ԳԻԾԵՐ ՍԱՅՄԱՆԵՑ

Յուլիսի կիսուն ԱՄՆ-ի նախագահ Ըօ Պայտընի այցելությունը Սեուլական Արաբիա կը յուշեր ծոցի երկիրներու եւ Միջին Արեւելքի տարածաշրջանին մէջ միջազգային ուժերու մրցավազքին մասին, յատկապէս ռուս-ուքրանական պատերազմին լոյսին տակ: Միացեալ Նահանգներ եւ արեւմտեան երկիրներ ամէն գնով կը փորձեն պաշարել Ռուսիան, փոխարէնը ստեղծել այնպիսի ազդեցիկ դաշտեր, որոնց ճամբով կարելի պիտի ըլլայ ռուսական կազմ, ցորենը եւ այլ հարստութիւնները փոխարինող աղբիւրներ գտնել՝ նուազեցնելու Ռուսիոյ արտածման ազդեցութիւնը արեւմտեան երկիրներու վրայ:

Միւս կողմէ ԱՄՆ ծոցի երկիրներուն հետ մերձեցումով կը ջանայ նուազագոյնի իջեցնել տարածաշրջանի ազդեցիկ երկիրներու՝ Իրանի եւ Թուրքիոյ դերը այդ երկիրներուն վրայ:

Այս այցելութեան որպէս պատասխան Թեհրանի մէջ օրերու հանդիպեցան Թեհրանի, Թուրքիոյ եւ Ռուսիոյ նախագահները՝ առաւելաբար Սուրիոյ հարցը քննարկելու, բայց նաեւ իրենց համար կարեւոր նշանակութիւն ունեցող հարցեր միասին վերլուծելու եւ կարմիր գիծեր սահմանելու կողմերու արեւելումներուն մէջ:

Ռուսիան կարեւոր ներկայութիւն է արդէն Միջերկրականի շրջանին մէջ: Իրանն ու Թուրքիան եւս իրենց ազդեցութիւնը ունին այս տարածաշրջանին մէջ: Ուստի, ԱՄՆ-ի կազմած բեւերին դիմաց անոնց գործակցութիւնը կը բխի բոլորին շահերէն:

Սուրիոյ հարցին պարագային գագաթնաժողովը դրական էր իր լուծումներու առաջարկներով: Առաջարկներ, որոնց մէջ կը քննադատուի նաեւ Թուրքիան, որովհետեւ ինք եւս կարճ շրջան մը առաջ կը նախատեսէր զինուորական գործողութեան ձեռնարկել Սուրիոյ հիւսիսային շրջանին մէջ:

Այս գագաթնաժողովին զինուորական այդ գործողութեան հաւանականութիւնը համարեա՛ չքացաւ ու Թուրքիան պարտաւորութիւն ստանձնեց գագաթնաժողովի միւս երկու երկիրներուն նման յարգելու Սուրիոյ տարածքային ամբողջականութիւնն ու բացառելու զինեալ որեւէ միջամտութիւն սուրիական տարածքին:

Աւելին՝ Իրանի Իսլամական Զանրապետութեան հոգեւոր առաջնորդը Թուրքիոյ նախագահին հետ հանդիպման առաջ բառերը ծամծըմելու, յստակօրէն ըսաւ, որ Սուրիոյ հիւսիսային շրջանի վրայ որեւէ յարձակում չի ծառայէր տարածաշրջանի երկիրներուն, այլ կը ծառայէր սահմանափակ շահերուն:

Այսպիսով Իրան պարզեց, որ Սուրիոյ դէմ զինուորական ուժ կիրարկելը Իրանի համար կարմիր գիծ է:

Իրանի հոգեւոր առաջնորդը այլ կարմիր գիծի մը մասին ալ խօսեցաւ, երբ հանդիպելով Փոլթիսին, ապա նաեւ Երտողանին, շեշտեց, որ Իրան պիտի չհանդուրժէ Զայաստան-Իրան սահմանի փակումը, որովհետեւ այդ սահմանը դարձնու պատմութիւն ունի:

Այս երկու հարցերուն առումով Թուրքիոյ յստակ ուղերձներ ուղղուեցան: Բնականաբար այս բոլորին դիմաց Թուրքիան եւս իր շահերը հետապնդելով պիտի փորձէ իր գործակիցներուն հաւանականութիւնը ստանալ Սուրիոյ մէջ քրտական գործօնի թուլացման ուղղուած իր ծրագիրներուն համար ու բարելաւել իր յարաբերութիւնները տարածաշրջանի երկիրներուն հետ, որպէսզի պահէ իր ազդեցութիւնը եւ տարածաշրջանի, եւ Զարաւային Կովկասի մէջ:

Սուրիա տասը տարի շարունակ դէմ դնելով պատերազմին իր յըստակ դիրքորոշումը յայտնեց, կրկնեց ամէն առիթի ու տէր կեցաւ անոր: Նոյն այդ դիրքորոշումը արտացոլաց թէ՛ նախագահին ուղերձներուն ընդմէջէն, թէ՛ կառավարութեան, եւ թէ՛ դիւանագիտական ներկայացուցիչներուն ամէն առիթի հնչած խօսքերուն ընդմէջէն: Այդ սկզբունքներն էին՝ Սուրիոյ տարածքային ամբողջականութեան պահպանումը, երկրի մասնատման բացառումը, երկրի գերիշխանութեան պահպանումը եւ օտար ուժերուն դուրս գալը:

Եւ հակառակ ներքին թէ արտաքին կողմերէ հնչած քննադատութիւններուն, տարածաշրջանի երկիրներուն կողմէ եւս հաստատուեցան այդ սկզբունքները՝ առ ի գործադրութիւն:

Թեհրանի գագաթնաժողովէն ետք, Սուրիոյ արտաքին գործոց նախարարը Իրանի արտաքին գործոց նախարարին հետ մամլոյ ասուլիսին ընթացքին գագաթնաժողովին արդիւնքը դրական համարեց, Սուրիոյ պահանջները յստակօրէն բանաձեւեց, յատկապէս Թուրքիոյ, ԱՄՆ-ի եւ Իսրայէլի ուղղելով իր խօսքը: Ան եզրափակելով ըսաւ որ Սուրիոյ բանակն ու ժողովուրդը երկիրը պիտի պաշտպանեն արտաքին որեւէ յարձակումի կամ թափանցումի պարագային: Միջազգային առումով Մրքատադիտել տուաւ որ աշխարհը այսուհետեւ միաբեւեռ չէ, ան բազմաբեւեռ է արդէն, իսկ բռնատիրութեանց, զինուորական յարձակումներու ժամանակը անցած է, դարը արեւելումներու եւ քաղաքական լուծումներու դար է:

Այս գագաթնաժողովը ուղերձներ կը յղէ նաեւ Զայաստանին՝ ազդեցիկ երկիրներու շահերու բախումէն առաւելագոյն օգտուելու եւ իրեն դէմ ցցուող վտանգները նուազագոյնի իջեցնելու:

«Գ.»

-Չորեքշաբթի, 20 Յուլիսին, Սուրիա յայտարարեց Ուքրանիոյ հետ իր դիւանագիտական յարաբերութիւններու խզումը՝ փոխադարձութեան սկզբունքին համաձայն:



Արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական աղբիւրը յայտնեց. «Սուրիոյ Արաբական Զանրապետութիւնը որոշած է խզել դիւանագիտական յարաբերութիւնները Ուքրանիոյ հետ՝ փոխադարձութեան սկզբունքին համաձայն եւ ի պատասխան ուքրանական կառավարութեան համապատասխան որոշումին:

«Սուրիա կը հաստատէ, որ Ուքրանիոյ կառավարութիւնը գործնականապէս խզած էր իր յարաբերութիւնները Սուրիոյ հետ 2018 թուականէն ի վեր, երբ մերժած էր Քիւիւ մէջ Սուրիոյ դեսպանատան մէջ գործող սուրիացի դիւանագետներու կեցութեան արտօնագրերու երկարաձգումը կատարել, անկարելի դարձնելով անոնց դիւանագիտական աշխատանքը: Այդ օրերուն դեսպանատան աշխատանքը դադարած էր ուքրանական կառավարութեան թշնամական վերաբերմունքին հետեւանքով»:

-Նոյն օրը, Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասադ 5 հրամանագրեր հրապարակեց, որոնց համաձայն հետեւեալ նահանգներու նահանգապետներուն փոխանակումն ու նորերու նշանակումը տեղի ունեցաւ՝ Դամասկոս, Դամասկոսի արուարձաններ, Զամա, Թարթուս, Քունէյթրա, Զոմա, Սուէյտա եւ Զասիչէ:



-Երեքշաբթի, 19 Յուլիս 2022-ին, տեղական աղբիւրներ հաղորդեցին, որ Զալէպ նահանգէն ներս ելեկտրականութեան մատակարարումը նկատելի բարելաւում արձանագրած է:



Յիշենք, որ նախօրոք, Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասադ այցելեց Զալէպ նահանգի արեւելեան արուարձանի ելեկտրաձին կայանը, ուր բացումը կատարեց կայանի վերանորոգում 5-րդ ելեկտրաձին բաժնին, որ Զալէպ նահանգին 200 մէկաուաթ տարողութեամբ ելեկտրականութիւն կը հայթայթէ:

Ներկայիս Զալէպ նահանգին անելի երկար ժամեր ելեկտրականութիւն կը տրամադրուի:

-Երեքշաբթի, 19 Յուլիս 2022-ին, սուրիական «Շամ Ուիւնկ» օդանավային ընկերութիւնը դիմատետրի իր պաշտօնական էջով յայտարարեց, որ Եւրոպական Միութիւնը «Շամ Ուիւնկ» ընկերութեան անունը շնչեց պատժամիջոցներու ցանկէն:



Յիշենք, որ տարի մը առաջ, Եւրոպական Միութիւնը պատժամիջոցներ պարտադրեց ընկերութեան վրայ, ամբաստանելով ընկերութիւնը Միջին Արեւելքէն գաղթականներ Պելառուս փոխադրելու յանցանքով:

- Զալէպի մէջ ԶԶ Մարդասիրական Առաքելութեան 10-րդ խումբին հերթափոխը տեղի ունեցաւ:



18 Յուլիսին ականազերծողներ եւ բժիշկներ բաղկացած 10-րդ խումբը հասաւ Զալէպ եւ սկսաւ իր առաքելութիւնը: Զակասականային գործողութիւններու միջազգային չափորոշիչներուն համաձայն, 10-րդ խումբի ականազերծները, անցնելով ուսումնական նախապարժութիւններ, պիտի սկսին դաշտային իրենց աշխատանքները:



Լուրեր Հայաշխարհին

«ԱՅ-ԹՐԵԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ՊԵՏԷ ԶԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՔ ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՆԱԼ», Կ'ԸՍԷ ՍՈՒՐԱՏ ՓԱՓԱՉԵԱՆ

ՆԱԽԱՐԱՐ ԲԵՐՈՒԹԵԱՆ ՈՒ ՀՀ-Ի ՍՈՒՐԻՈՅ ՊԵՍՊԱՆԸ ԲՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏԻ ՄԵՋ ԿԱՊԵՐՈՒ ԱՐՐԱՊՆՊԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Փարիզի հայկական ռատիո կայանի՝ «Այբ. ԷՖ. Էմ.»-ի կլոր սեղանի իր-րեւ հիւր, ՀՀ Բիւրոյի անդամ եւ Ֆրանսահայ Կազմակերպութիւններու Համակարգող Խորհուրդի համանախագահ Մուրատ Փափագեան անգամ մը եւս հաստատեց, որ Հայաստան մուտքի իր դէմ արգելքը ունի գուտ քաղաքական բնոյթ, չկայ որեւէ իրաւական հիմք եւ տակաւին կը սպասէ եւ իշխանութիւններէն կը պահանջէ պաշտօնական բացատրութիւն, գոր ցարդ կը զլացուի:

Ֆրանսերէն լեզուով կատարուած շահեկան հարցազրոյցէն ստորեւ՝ թարգմանաբար կարելի է կտրել, գորս արտայայտեց ան.

-Նիկոլ Փաշինեանի որոշումը զիս անբաղձալի տարր հռչակելու մեծ սխալ մըն է իր կողմէ, որովհետեւ առաւել կը խորացնէ փոսը Հայաստանի եւ Սփիւռքի միջեւ, առաւել կը շեշտէ բաժանումը, ինչպէս նաեւ առաւել կը հրահրէ լա-րուածութիւնը Հայաստանի մէջ՝ ընդդիմութեան եւ իշխանութեան միջեւ: Եւ վերջապէս, արտաքին աշխարհին առջեւ վատ պատկեր մը տուաւ ան Հայաստանի վարկին համար:



-Փաշինեան, որ 2018-ին իշխանութեան հասաւ ժողովրդավարութեան արտաքին դիմակով, այսօր Հայաստանը հաւասարեցուց հարեան երկիրներու ժողովրդավարական վիրաւոր մակարդակին, երբ մինչ անցող տարիներուն մէջ միշտ ալ կը հպարտանայինք մեր առաւելութեամբ: Այսօր խօսքի ազատութեան իրաւունքը խնդրոյ առաւել կ'ընկալուի, կ'ոտնահարուի մարդկային տարրական տարբեր իրաւունքներ, հետեւաբար այս իրավիճակը մեզ ցաւօք կը հաւասարեցնէ շրջանային հարեան երկիրներու ոչ նախանձելի մակարդակին:

-Շատ բնական կը գտնեմ, որ Հայաստանի մէջ ընդդիմութիւնը ըլլայ կարծի ու վճռական, որովհետեւ կը պայքարի ու կ'ընդդիմանայ իշխանութեան եւ անձի մը դէմ, որ պատասխանատուութեան իր հսկայական բաժինը ունի 44 օրեայ պատերազմին եւ անոր պարտութեան մէջ, ինչպէս նաեւ հազարաւոր զոհերուն եւ ահաւոր կորուստներուն մէջ:

-Շատ հաւանաբար հայ-թրքական յարաբերութիւններու տուեալը նաեւ կրնայ կապ ունենալ Հայաստան մուտքի արգելքի մէջ: Մենք 2009-էն ի վեր յստակ դէմ եղած ենք նախապայմաններով յարաբերութիւններու սկզբման եւ մեր դիրքորոշումը փոխուած չէ, ինչ որ հաշտ չի դիտուիր այս իշխանութիւններուն կողմէ, որոնք ոչ միայն կողմ են, այլեւ դրական կ'ընկալեն զայն: Այստեղ պէտք չէ մոռնալ նաեւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Զաւուշօղլուի վերջերս կատարած յայտարարութիւնը, թէ հայ-թրքական յարաբերութեան բնականոնացման ուշացման մէջ հայկական Սփիւռքը հիմնական արգելք է:

-Մենք ի սկզբանէ յայտնած ու կրկնած ենք, որ Փաշինեան եւ իր շրջապատը պատրաստ են ու եկած են Արցախը զիջելու Ատրայեճանին եւ ամէն գնով Թուրքիոյ հետ սկսելու յարաբերութիւններ մշակել, ոչ միայն այլեւ դիւանագիտական, ինչ որ աղէտալի է անշուշտ: Շատեր նկատի չէին առնել մեր նախատեսութիւնը, չէին հաւատար, Նոյնիսկ կը քննադատէին ու կը շարունակէն քննադատել մեզ, սակայն ահաւասիկ փաստը մէջտեղն է եւ ցաւօք մենք ճիշդ էինք:

-Հայ-թրքական յարաբերութիւններու սկսման որոշումը պէտք չէ տրուէր ու տրուի առանձին, մանաւանդ՝ հապճեպօրէն, ինչպէս որ կատարուեցաւ: Նման եական ու գերզգայուն օրակարգ ունի համահայկական, համազգային բնոյթ ու խորք, հետեւաբար նախքան անոր նախաձեռնումը կը կարօտէր համահայկական լայն քննարկումի, որմէ ետք միայն կրնար տրուիլ կամ ոչ համապատասխան որոշում:

Սփիւռքը իր խօսքը պէտք է ունենայ անպայման այս գծով: Որոշումը պէտք է տրուի Հայաստան-Արցախ-Սփիւռք եռամիասնութեան համաձայնութեամբ միայն, սակայն այդպէս չէրաւ այսօր եւ կը տեսնենք աղիտաբեր արդիւնքը: Հայաստան կը ներկայանայ ի սկզբանէ թոյլ ու օկար դիրքերէ, որուն հետեւանքը կ'ըլլայ բնականաբար զիջում:

Հայաստան պարտաւոր է Սփիւռքի ուժեղ խաղաքարտը գործածելու, որպէսզի կարենայ դուրս գալ իր անել կացութենէն:

Ես այստեղ, այս սեղանէն կը պահանջեմ այս օրակարգով սկսիլ համահայկական լայն քննարկումի եւ բանավեճի, որմէ ետք միայն տալ հաւաքական որոշում:

Եւ վերջապէս ու անգամ մը եւս յայտնենք, որ մենք անպայմանօրէն դէմ չենք Թուրքիոյ հետ յարաբերութեան սկսման, ինչպէս կը կարծեն շատեր: Ո՛չ: Բայց առիկա պիտի ըլլայ երկուստեք առանց նախապայմանի, իսկ թրքական կողմը այդ մէկը շրջանցած է արդէն, դրած է իր պայմանները, եւ Հայաստան անհասկնալիօրէն ընդունած է զայն, ինքզինք դնելով տկար ու թոյլ դիրքի ու վիճակի մէջ: Ահաւասիկ այս շուտիկութիւնն է, այս մօտեցումը, գոր կը մերժենք: Հունկ՝ այսօր Հայաստան պատրաստ չէ նպաստաւոր դիրքերէ ներկայանալու բանակցութեանց այդ սեղանին:

ՀՀ տնտեսութեան նախարար Վահան Զերոբեան 18 Յուլիսին ընդունած է Հայաստանի Հանրապետութեան Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Նորանշա-նակ դեսպան Նորա Արիսեանը: ՀՀ տնտեսութեան նախարարութիւնը կը տեղեկացնէ, որ քննարկուած են, յատկապէս արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան եւ առեւտուրի ոլորտներու մէջ երկկողմ գործակցութեան եւ գործարար կապերու ամրապնդման կարելիութիւնները:



Յատուկ անդրադարձ կատարուած է հայ-սուրիական միջկառավարական յանձնաժողովի հերթական նիստի կազմակերպումին ու իրագործման ժամկետին:

ՅԱԿՈՒՑ ԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

տեսակէտը, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները եւ Հայաստան-Ատրայեճան սահմանագ առման ու սահմանագծման խնդիրները, որոնք սերտօրէն կ'առնչուին Արցախի կարգավիճակին հետ:

Այցելութեան ընթացքին, արդիւնքներուն, Հայաստանի եւ Արցախի ներքին ու արտաքին քաղաքական շարք մը հարցերու շուրջ «Ապառաժ»-ը հարցազրոյց մը ունեցած է ՀՀ Բիւրոյի ներկայացուցիչին հետ:

Պատասխանելով այցելութեան արդիւնքներուն մասին հարցումին՝ Յակոբ Տեր Խաչատուրեան ըսաւ. «Արցախի իշխանութեան օղակներուն հետ քննարկեցինք Արցախի ներկայ իրավիճակը, անվտանգութեան խնդիրները, պետական առաջնահերթութիւնները, բանակցութիւններու գործընթացը, օտարերկրեայ պետութիւններու հետ յարաբերութիւններու կօփկը, ինչպէս նաեւ փոխադարձ գործակցութեան կարելիութիւնները, որպէսզի Արցախի ձայնը հասանելի դարձնենք աշխարհով մէկ: Այդ ուղղութեամբ ՀՀ-ն շարունակական ծրագիր ունի. Արցախի Հանրապետութեան նախագահը, պետական նախարարը եւ արտաքին գործոց նախարարը այցելած էին Սփիւռքի տարբեր համայնքներ մեր հովանաւորութեամբ եւ օժանդակութեամբ: Այդ այցելութիւնները միայն ներագգային բնոյթ չունին, միայն գաղութներու հետ խօսելու: Նպատակ չէն հետապնդել, այլ կը ներառեն նաեւ օտար հասարակութեան եւ տարբեր երկիրներու դէկավարութեանց հետ յարաբերութիւններու ոլորտը: Պետական պաշտօնեաներու հետ հանդիպումներ ապահովելը խիստ կարեւոր է, հակառակ անոր որ իբրեւ չճանչցուած հանրապետութիւն՝ շատ երկիրներ կը խուսափին Արցախի հետ քաղաքական յարաբերութիւններ հաստատելէ:

Իշխանութիւններու ներկայացուցիչներուն հետ խօսած ենք նաեւ ՀՀ-ի մարմիններու եւ Հայ դատի կորիզներու հետ աշխատանքները համադրելու անհրաժեշտութեան մասին, որպէսզի շարունակենք տարիներէ ի վեր տարուող աշխատանքը Արցախի ինքնորոշման իրաւունքի հաստատման եւ անկախութեան ճանաչման համար: Այդ աշխատանքները կը կատարուէին պատերազմէն առաջ, շարունակուած են Նոյնիսկ պատերազմի ընթացքին եւ անկէ ետք: Մեր շարունակական խորհրդակցութիւններուն ընթացքին տեղեկութիւններ կը փոխանակենք Արցախի իշխանութեան ներկայացուցիչներուն հետ եւ որոշ աշխատանքներու մէջ կ'ակնկալենք գործնական օժանդակութիւն ու ջանքերու համադրում:

Ներկուսակցական իմաստով՝ ինձի համար ողջունելի է մեր շարքերուն հետ հարողակցիլը եւ անոնց բազկերակը շօշափելը: Արցախի բոլոր շրջաններէն մեր ընկերները հաւաքուած են Ստեփանակերտի մէջ, եւ ընկերական հաւաք ունեցած ենք: Այդ հաւաքի ընթացքին ներկայացուցած էի թէ՛ Բիւրոյի նախաձեռնութիւնները, թէ՛ ՀՀ-ի կեցուածքը ազգային եւ հայրենի հարցերու նկատմամբ եւ թէ՛ տարբեր ոլորտներու մէջ ճշդուած առաջնահերթութիւնները: Մարտ 2022-ին աւարտած է ՀՀ Ընդհանուր ժողովը եւ ձեւաւորուած է Նոր Բիւրօ: Ծրագրման աշխատանքը աւարտած է, եւ մենք հիմա մարտավարական եւ գործնական ուղեցոյց կը վերածենք այն, որպէսզի քայլ առ քայլ իրագործենք մեր առաքելութիւնը: Այդ առաքելութիւնը համահայկական է, բայց անոր մէջ խիստ կարեւոր տեղ ունի Արցախը: Իբրեւ Հայ դատի իրագործման առաջին փուլ՝ Դաշնակցութեան համար ընդունելի չէ Արցախի իրաւունքներէն որեւէ նահանջ: Ուրախ եմ արձանագրելու, որ Արցախի ընկերները, հակառակ ամէն տեսակ գրկանքներու, պատերազմի հետեւանքներուն, պատրաստ են լոր թափով լծուելու աշխատանքի»:





## ՍՈՒՐԻՈՅ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ 9-ՐԴ ԿԱՐԳԻ՝ ՊՐՈՎԵԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԱՐԴԻՆՔՆԵՐԸ

Երեքշաբթի, 19 Յուլիս 2022-ին, Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը հրապարակեց 2021-2022 ուսումնական տարեշրջանի միջնակարգի աւարտական կարգի՝ պրովէի, պետական քննութիւններու արդիւնքները:

Նախարարութեան համաձայն, յաջողութեան տոկոսը 78,62 առ հարիւր է: Պետական քննութիւն յանձնած է 306.796 աշակերտ-աշակերտուհի, յաջողած է՝ 241.186 աշակերտ-աշակերտուհի:

Բարձրագոյն կիշի արժանացած է 97 աշակերտ-աշակերտուհի:

Այս առիթով, ջերմապէս կը շնորհաւորենք յաջողութեան արժանացած մեր աշակերտ-աշակերտուհիները, յատկապէս գերազանց արդիւնք ապահովողները, որոնք պատուաբեր արդիւնքներով բոլորեցին ուսումնական այս տարեշրջանը՝ հպարտութիւն առթելով իրենց ծնողներուն, ուսուցիչներուն եւ վարժարաններուն:

Ստորեւ կը ներկայացնենք հալէպահայ միջնակարգ վարժարաններուն արդիւնքները:

### ԱՉԳ. ՔԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆ

Մասնակցողներու թիւ՝ 49  
Ցաջողածներու թիւ՝ 49  
Ցաջողութեան տոկոս՝ 100%

Արման Գրիգորեան	2533
Յակոբ Զարշաֆճեան	2525
Սաթիկ Թիւֆէնքճեան	2514
Սելա Աթաբարճեան	2477
Ժէնի Մխսեան	2449
Անի Պարոնեան	2424
Աննա Մարիա Տաուլէ	2418
Յակոբ Շաքարեան	2402
Սեդա Կիւլիւմեան	2370
Սեւակ Պազարպաշեան	2369
Յովիտ Յովհաննէսեան	2367
Գեորգ Ժան Գահուէճեան	2364
Աննա Նիկողոսեան	2306
Վրէժ Գրիգորեան	2267
Նայիրի Բարսեղեան	2261
Մեղեդի Կիրակոսեան	2249
Սարին Սարգիսեան	2212
Յակոբ Մինասեան	2162
Լիւսի Նալպանտեան	2116
Արաքս Շաթոյեան	2079
Շադիկ Արոյեան	2052
Անի Աթրաշ	2032
Հայկ Գույումճեան	1841
Մելիսա Պարտաքճեան	1542
Վանի Պարտաքճեան	1434
Լիւսի Գրիգորեան	1312
Շողակ Խրոյեան	3086
Արփի Արապանեան	3022
Նանոր Լախոյեան	2920
Եսթեր Կիւլտալեան	2907
Այտա Չալաքեան	2906
Քրիստ Պարտաքճեան	2865
Թալին Մելքոնեան	2859
Քրիստ Տեմիրճեան	2837
Մեղրի Եագուպեան	2833
Լեւոն Հայկեան	2815
Աննա Մարիա Տեր Պողոսեան	2803
Լոռի Պետրոսեան	2803
Նայիրի Չափրագեան	2798
Քրիստ Պալանեան	2786
Յովհաննէս Յովհաննէսեան	2761
Յակոբ Գայապալեան	2715
Բալիկ Սարգիսեան	2709
Դանիէլ Դանիէլեան	2703
Նաթալի Խլիօ	2692
Լիլիթ Սարգիսեան	2677
Աննա Մարիա Ասայեան	2618
Նարինէ Մխսեան	2610
Ծիլա Պերթիզլեան	2547

### ԿՐԹԱՄԻՐԱՅ Ս. Զ. ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆ

Մասնակցողներու թիւ՝ 52  
Ցաջողածներու թիւ՝ 51  
Ցաջողութեան տոկոս՝ 99%

Արփի Գրտանեան	3077
Մաճոտ Մախլուֆ	3057
Ժան Ապաճի	3043
Ալին Ապաճի	3026
Մելիք Տատաղեան	3009
Տոլլի Պայտուն	3009
Մարիէլլա Ճանճի	3004
Մարք Աուատ	2981
Վանեսա Մրէշ	2978
Սալիմ Աթրաշ	2968
Նայա Ֆատիլի	2964
Սինթիա Պշարա	2951
Թէյմ Պարիում	2904
Փաթրիսիա Իսիաք	2887
Իլիաս Հաննա	2872
Սապին Ֆրէժ	2871
Չաքի Կաուրօ	2849
Քրիսթինա Իպրահիմ	2830
Դիա Տայեխ	2816
Սանտի Աթարա	2783
Շարպէլ Ֆաքքաս	2713
Ֆահմի Զոգապոյուք	2683
Մարիթա Թահմէ	2683
Ժօէլ Սաքքալ	2664
Շարպէլ Իպրահիմ	2614
Էլսի Իպրահիմ Աղա	2608
Նաթիսիա Խուրի Ապտալլա	2552
Նազօ Ստեփան Չարիֆեան	2533
Նարեկ Զէլլեան	2526
Գաբրիէլ Հանա	2472
Մարիօ Պրոշինի	2384
Սալմէ Նահասնէ	2358
Ճորճ Չէյթուն	2349
Ճորճ Չալաք	2321
Մարիթա Պատտուշ	2313
Իլիաս Կարապետ	2288
Մարսէլլա Ռազզուք	2274
Գաբրիէլ Ասմար	2242
Ռազէք Շրէյքի	2220
Իլիաս Իլիաս	2191
Նայիմ Մարտլիլի	2119
Վերժին Աշոքէլեան	1977
Շոգէֆ Պալեան	1964
Ուստի Զապապալէ	1961
Մարի Նասէ	1871
Դանիա Ճըրճի	1857
Շոգէֆ Ճէնանեան	1748
Միրէյ Ուրֆալի	1742
Յարութիւն Բանճարճեան	1667
Հուտա Իտլիպի	1518
Ալֆրետ Արքիլօ	1374

### ՀԱՅ ՍԻՏԱՐԱՆԱԿԱՆ ԲԵԹԷԼ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆ

Մասնակցողներու թիւ՝ 24  
Ցաջողածներու թիւ՝ 24  
Ցաջողութեան տոկոս՝ 100%

Նաթալիա Պաննա	3094
Մարիա Մարթա	3090
Ժագ Մրճանէ	3077
Հաննա Իսիաք	3067
Անոր Նէնէճեան	3050
Մարիթա Նաում	3037
Ճորճ Ասի	3028
Էլիթա Տաուտ	3018
Սինթիա Մախիսուլ	3002
Ժատ Մարիէ	2992
Ճորճ Պաթիսա	2986
Իլիաս ալ-Ապետ	2965
Ֆատիլ Փիլիպպոս	2944
Ալեքսանտր Ֆարահ	2911
Բամելա Պազրճի	2861
Լեա Եուսէֆ	2854
Սթեֆանի ալ-Նահի	2833
Փաթիլ Սաատէ	2808
Սարա Արսլանեան	2800
Նաֆէ Ֆարահ	2771
Թագուհի Սազեան	2731
Բերլա Մախիսուլ	2705
Ճորճ Արմենակ	2402
Շաքէ Փիլանճեան	2260

### ԼՆԱՃԱՐԵԱՆ - Գ.ԿԻԻՂԵՆԿԵԱՆ ԿԵՊՈՆԱԿԱՆ ՎԱՐՇԱՐԱՆ

Մասնակցողներու թիւ՝ 32  
Ցաջողածներու թիւ՝ 31  
Ցաջողութեան տոկոս՝ 97%

Յակոբ Խաչատուրեան	3063
Սինտի Սեֆերեան	3013
Շարպէլ Սիուֆի	3011
Արմիկ Պապօղլեան	2991
Գեորգ Զասսիս	2946
Շողեր Տեր Յովհաննէսեան	2896
Մարիա Գարգուրեան	2890
Ներսէս Փիլոյեան	2871
Յարութ Սարգիս	2871
Այմէգ Սապապաղ	2796
Անթոնիօ Հատտատ	2718
Դուին Եագուպեան	2704
Դիա Խապապալէ	2701
Հայկան Ոսկեան	2696
Քրիստինա Արսլանեան	2679
Դիա Չէլլա Համասեան	2623
Մարիա Նալպանտեան	2602
Ճորճ Մամօ	2573
Գեորգ Չորպաճեան	2466
Սիրուն Սեմերճեան	2432
Անթոնիօ Համասեան	2361
Գառնի Տապապաղեան	2321
Մարիա Քրիսթինա Եագուպեան	2215
Անի Նաճարեան	2185
Լիլա Գասապեան	2150
Լիւսի Տէկիլմէնճեան	2115
Փաթիլ Ռիկա	1999
Աննա Մարիա Յակոբեան	1906
Սուրեն Իսկէնեան	1789
Միրէյ Չոփուրեան	1750
Վանայ Թաշճեան	1663

### ԱՆԱՐԱՏ ՅՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ԶՈՒՐԹՆՈՅ ՎԱՐՇԱՐԱՆ

Մասնակցողներու թիւ՝ 20  
Ցաջողածներու թիւ՝ 20  
Ցաջողութեան տոկոս՝ 100%

Աննա Պոյաճեան	2955
Նայա Թոպալ	2955
Ժօէլ Ըպրահիմ	2637
Ճորճ Պետրոսեան	2627
Պետրոս Ճապալի	2558
Հաննա Սապապաղ	2449
Նասրադիա Սայել	2440
Ճորճ Շրէյքի	2343
Բաքքալ Ճըպարա	2247
Քարլա Ասատուրեան	2127
Թագուհի Նասրի	2103
Ճորճ Աճայեպ	2103
Ապտ Ալլա Հատտատ	2087
Նիքոլա Հատտատ	1967
Նաթալի Չիուփերեան	1920
Ապտ Ալլա Մուզապէր	1886
Նաթալի Տանիաշ	1826
Ճորճ Օլգան	1793
Ճոնի Գապանճեան	1689
Քարէն Հատտատ	1605

### ԿԻԿԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Մասնակցողներու թիւ՝ 10  
Ցաջողածներու թիւ՝ 9  
Ցաջողութեան տոկոս՝ 90%

Ճորճ Խուրի	2898
Յողիկ Փոքրաւորեան	2408
Կրասիա Տիպ	2220
Մայլ Տայուպ	2179
Միլտա Ռիթա Այվազեան	2037
Իսթըր Օհան	1804
Միրիամ Ճըլլ	1762
Անտիս Զաքարի	1692
Նայա Տիպ	1320



## ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ 26-ՐԳ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԱՍՆԱԿԻԳՆԵՐԸ ԻՐԱՆՔԱՏՈՒԿ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ Կ'ԱՊՐԻՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԷՋ

«Քորոնա»-ի համաճարակին պատճառով աշխարհին մեջ ստեղծուած սահմանափակումներուն եւ անբնական կացութեան պատճառով Համագ-գայինի Կեդրոնական վարչութեան աւանդութեան վերածուած նախաձեռ-նութիւններէն՝ Համագգայինի ուսանողական հաւաքը տարի մը կատա-րուեցաւ անցանց դրութեամբ, բայց այս տարի անկախ վերադարձաւ իր աւան-դական ձեւին: Արդարեւ, 8 Յուլիս 2022-ին ընթացք առաւ եւ խանդավառութե-ամբ ու հետաքրքրութեամբ կը շարունակուի ուսանողական 26-րդ հա-ւաքը, որուն կը մասնակցին Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքի տարբեր գաղութներէն ուսանողներ:

Այս հաւաքներուն նպատակն է հայրենիքը աւելի մօտէն ծանօթացնել հայ ուսանողներուն, գանոնք հաղորդակից դարձնել ազգային ժառանգու-թիւններուն ու մշակոյթին, առիթ տալ համախմբուելու եւ միասնաբար պե-ղելու հայրենիքի գաղտնիքները:

Ֆորումի բացման հաւաքին մասնակիցները ծանօթացան Համագգ-այինի առաքելութեան եւ գործունեութեան, ինչպէս նաեւ՝ ֆորումի ծրագրի-ն, նպատակին եւ օրէնքներուն:

Ֆորումին երկրորդ օրը սկիզբ առաւ Հայաստանի Պատմութեան թան-գարան այցելութեամբ: Մասնակիցները ծանօթացան մեր հայրենիքին հա-րուստ պատմութեան եւ ինքնատիպ մշակոյթին, որմէ ետք խումբը այցե-լեց Եղիշէ Զարեանի կամար: Ինչպէս Չարեան կը սիրեր այս վայրի ցնցող



տեսարանը, ֆորումականներն ալ պահ մը վայելեցին դէպի Արարատի գիր-կը բացուող յիշարժան տեսարանն ու բոյրը:

Կէսօրին մասնակիցները առիթը ունեցան տեսնելու մեր միակ հեթա-նոսական տաճարը՝ Գառնին: Մասնակիցները առիթը ունեցան տեսնե-լու նաեւ Գառնիի «Քարերու սիմֆոնիա»-ի արտակարգ գեղեցկութիւնը, ապա ուղղուեցան դէպի Գեղարդ: Գեղարդի բնութիւնը վայելելէ ետք մաս-նակիցները աղօթքով ու օրհնութեամբ վերադարձան մայրաքաղաք:

10 Յուլիսին Հայաստան, Արցախ ու Սփիւռք միասնական ուժով ու հա-ւատքով ֆորումականները իրենց պարտքը կատարելով եւ այցելեցին Ծի-ծեռնակաբերդ ու Հայոց Ցեղասպանութեան թանգարան: Ապա խումբը այ-ցելեց արցախեան պայքարի հերոսներու պանթէոնը՝ Եռաբլուր: Ֆորումա-կաններու յուզուած աչքերն ու ծաղիկները թրջեցին Արցախի 44-օրեայ պա-տերազմի նահատակներէն, նախկին ֆորումական Արտակ Իշխանեանի սուրբ հողը:

13 Յուլիսին ֆորումականները առաւօտեան այցելեցին Հայաստանի գեղատեսիլ վայրերէն մին՝ Ծաղկաձոր: Բնութեան գուլալ օդն ու կանաչա-գարդ լեռները վայելեցին՝ ճոպանուղիին վրայ եւ անոնց հոգիները յագեցան հայրենիքի բնութեան շերտութեամբ:

Ապա ուսանողները այցելեցին «Տիրամայր Հայաստանի» ճամբարը, ուր փոքրիկներուն հետ կէսօրեայ յայտագիր մը ունեցան, որ կ'ընդգրկէր ճաշ եւ գանակազան մարզական ու երաժշտական խաղեր: Իւրաքանչիւր երե-խայի սերն ու ժպիտը ֆորումականներուն սիրտերն ու հոգիները լեցուցին: Անոնք միասնաբար ուրախ եւ օգտաշատ ժամեր անցուցին:

Երեկոյեան ուսանողները առիթը ունեցան սորվելու հայկական ազգագ-րական պարեր, աւելի մօտէն ծանօթացան պարարուեստի գաղտնիքնե-րուն՝ «Արեւի տենս սթիւտիո»-ին մէջ, ուր անոնց ուսուցուեցաւ հայկական քոչարին ու թամբարան:

Երեկոյեան ֆորումականները իրենց մասնակցութիւնը բերին «Ո՞վ է հայը» գրոյցին: Զրուցավարն էր պատմաբան Վարագ Գեթցեմանեան: Միտ-քերու փոթորկումի պահեր ապրեցան երիտասարդները, որոնցմէ իւրաքան-չիւրը այս հարցին վերաբերող տարբեր մօտեցում եւ ընկալում ունի, յատ-կապէս՝ մեկնելով այն իրողութենէն, որ իւրաքանչիւրը կու գայ տարբեր երկրէ, տարբեր միջավայրէ: Ծաւալեցաւ հետաքրքրական եւ շինիչ գրոյց մը, որ մտածելու, անձնական փորձառութիւններու մասին արտայայտուե-լու, ապրումներ փոխանակելու առիթ եղաւ:

Ֆորումի 11 օրերու ընթացքին հայ ուսանողները առիթ կ'ունենան հան-դիպելու հայ մտաւորականներու, քաղաքական-հասարակական գործիչ-ներու հետ, լսելու պատմամշակութային թեմաներով դասախօսութիւններ, քննարկելու հայ ժամանակակից երիտասարդները յուզող տարաբնոյթ հարցեր:

## Թուրքիոյ նուրջ

### ԱՄՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉՆԵՐՈՒ ՊԱԼԱՏԸ ՈՐՈՇՈՒՄ ԸՆԴՈՒՆԱԾ Ե ԽՍՏԻ ՎԵՐԱՀԱՅՎԵԼՈՒ F-16 ԿՈՐԾԱՆԻՉՆԵՐՈՒ ԹՈՒՐԵՒՈՅ ՎԱՃԱՌԵԻՆ

«Երմենիհապեր» կը հաղորդէ, որ ԱՄՆ ներկայացուցիչներու պալատը ընդունած է ժողովրդավար անդամ Քրիս Փափասի կազմած օրինագիծը, որով կը նախատեսուի խիստ վերահսկողութիւն սահմանել Թուրքիոյ F-16 կործանիչներու վաճառքի գործ-ընթացին վրայ: Փաստաթուղթը ընդունուած է 244 կողմ, 179 դէմ յարաբերակցութեամբ:



Կը նշուի է, որ Փափաս այս նախագիծը ներկայացուցած է Յունաստանի ունեցած մտահո-գութիւններուն պատճառով: Նա-խագիծին մէջ կործանիչներու վաճառքի գործընթացին մէջ 2 նախապայման հարկ է աւելցնել:

Նախապայմաններէն մեկը այն է, որ վաճառքը պէտք է իրականացուի ԱՄՆ-ի ազգային շահերուն համապատասխան, միւսը կը յուշէ, որ պէտք է երաշխիքներ տրամադրուին առ այն, որ կը կանխարգիլեն Թուրքիոյ կողմէ այդ կործանիչներով Յունաստանի տարածք չարտօնուած թռիչքներու իրա-կանացումը:

### ԷՐՏՈՂԱՆ ԻՐԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅԻՆ ՓՈՒԹԻՆԻ ՇԵՏԵՐԿՎՈՂ ՆԱԿԻՊՈՒՄ ԿԸ ՆԱԽԱՏԵՄ

Թուրքիոյ նախագահ Էրտողանի աշխատակազմէն յայտարարած են, որ վերջինս յոյս ունի երկկողմ բանակցութիւններ վարելու Ռուսիոյ նախա-գահ Փութինի հետ 18-19 Յուլիսին Իրան այցելութեան ընթացքին:

Աւելի ուշ Ռուսիոյ նախագահի մամուլի քարտուղար Տիմիթրի Փետրով հաստատած է յաջորդ շաբաթ Փութինի այցը Իրան: Փետրով աւելցուցած է, որ Իրանի մէջ տեղի պիտի ունենայ Փութինի եռակողմ հանդիպումը Իրա-նի նախագահ Ռայիսիի եւ Թուրքիոյ նախագահ Էրտողանի հետ: Ռուսիոյ՝ Թուրքիոյ ղեկավարները նաեւ առանձին բանակցութիւններ պիտի վարեն: Զրեմիլի ներկայացուցիչը պարզած է, որ այցելութիւնը տեղի պիտի ունենայ 19 Յուլիսին:

### ՆՈՐՈՑ ՄԻԱԲԱՆ...

Սկիզբ՝ էջ 12

րուեր, օգնական չունէր, մխրճուած էր մեղքի մէջ եւ հոգեւոր պապակէ եւ երաշտէ կը տառապէր: Սակայն, ճշմարիտ բժիշկը՝ Յիսուս Զրիստոս մօտեցաւ անոր եւ բժշկեց:

բ. Յոյսի հրամայականը: Հայր Սուրբը յայտնեց, թէ ան-դամալոյծը մարդոցմէ իր յոյսը կըտ-րած էր, սակայն 38 տարիներ յոյսով սպասեց Տիրոջ եւ բժշկութեան ար-ժանի դարձաւ:

Հետեւաբար, Հայր Առաքել հաս-տատեց, որ կենսիցի դժուարութիւն-ներուն մէջ մենք առանձին չենք, այլ մեր կողքին ունինք մեր Տէրն ու Փրո-կիչը՝ Յիսուս Զրիստոս, որ երկինքէն երկիր իջաւ փաստելու համար, որ միշտ մեզի հետ է: Ան հրաւիրեց ներ-կանները, որպէսզի անդամալոյծին օրինակին հետեւելով ապաւինին Աստուծոյ եւ յոյսով սպասեն Տիրոջ օգնութեան:

Ապա, Հայր Սուրբին կողմէ հա-ւատացեալներուն մատակարար-ուեցաւ Ս. Հաղորդութիւնը:

Պատարագէն ետք, եկեղեցւոյ սրահէն ներս, Սրբազան Հօր գլխա-ւորութեամբ, Հայր Սուրբին եւ անոր ծնողներուն ու հարազատներուն հետ շնորհաւորական հանդիպում տեղի ունեցաւ:

Այս առիթով, եկեղեցւոյ Թաղա-կան Խորհուրդը յուշանուէրով մը պատուեց Հայր Սուրբը:

Հայր Առաքել խօսք առնելով, կրկին անգամ իր որդիական սերն ու երախտագիտութիւնը յայտնեց ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրա-պետին՝ իր հայրական հոգատարութե-ան համար: Ընտրականալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ պատարագելու այս առիթը ըն-ծայեց իրեն: Վերջապէս, ան շնորհա-կալութիւն յայտնեց իր ծնողներուն, որոնք միշտ կը քաջալերեն գինք՝ ծառայելու Հայ Եկեղեցւոյ:

Ան անդրադառնալով սրահէն ներս ներկայ գտնուող իր դպրեվա-նեցի եղբայրներուն պատուիրեց, որ մեծ սիրով եւ նուիրուածութեամբ շարունակեն իրենց ուսումը՝ միաս-նաբար ծառայելու Հայ Եկեղեցւոյ եւ Հայ ազգին:

Հայր Սուրբին ծնողքը եւ շնոր-հակալական խօսք ուղղեց բարե-խնամ Առաջնորդ Սրբազան Հօր:

Աւարտին, Սրբազան Հայրը շնորհաւորեց Հայր Առաքելը՝ արե-ղայական ձեռնադրութեան առի-թով եւ մաղթեց, որ նուիրուածութե-ամբ եւ մեծ սիրով շարունակէ իրեն վստահուած եկեղեցանուէր առաքելութիւնը՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ անդամատանէն ներս:



Պրիսմակետ

ԽՈՂ, ԽՈՂԱՆՈՑ, ԽՈՂԱԳԻՐՔ



Մարյա Երամեան

Խոհանոց բառը, որ շատ հին է, առաջին լսած օրես իսկ շատ խորհրդավոր թուացրե է ինձի՝ խոհ-անոց, ինչո՞ւ խոհանոց, ի՞նչ կապ կրնայ ունենալ խոհ-ը ճաշ պատրաստելուն հետ:

Եւ փոխանակ դիրքին միջոցին դիմելի, այսինքն փոխանակ բացատրական կամ արմատական բառարաններուն մէջ փնտռելի, ուղեղիս «գոռ» տուի եւ որոշեցի՝ որովհետեւ ճաշ եփելը արդուկ ընելուն պէս առանձին կատարուելիք աշխատանք է, հետեւաբար մարդ,- ըսել կ'ուզեմ կինը,- կը մղուի խոհերու տրուելուն. ասկէ՝ խոհանոց բառը:

Չարաչար կը սխալելի անշուշտ:

Գայայեանին մէջ կը գտնենք.

Խահ - ուտելիք, կերակուր, խորտիկ

Խոհանոց - ճաշ եփելու տեղ

Խոհեակ - խոհարարի օգնական

Բայց եթէ խահ կերակուր կը նշանակէ, պետք չէ՞ր ըլլար խահանոց, խահարար, խահեակ ...

Այս մասին կը խօսէի դասապահերու միջեւ եղած դադարին, երբ դասախօսուհիներէն մէկը սրտմտած ըսաւ.

-Ո՛չ ոչ, ես կ'ուզեմ շարունակել հաւատալ, որ խոհանոցը մեզի՝ հայերուն համար նաեւ մտածելու տեղ է. մտածող ազգ եք ի վերջոյ ...

Ուզելով չէ սակայն:

Բառին արմատը պարսկական է, ըստ Աճառեանի՝ xvarh բառէն, որ խորտիկ կը նշանակէ՝ խարի, խորի. ր-ն ինկեր ու մնացեր է խահ-ը, խոհ-ը. գաւարաբարբառով՝ խախ, խոխ, խոխանոց ...

Խոհագիր-ն ու խոհագիրք-ը աւելի ուշ «շինուած» բառեր են:

Որքան ալ կին մը գիր-գրականութենէ հեռու ըլլայ, անպայման կ'ունենայ խոհատետտո մը, ուր խոհագիրքը կը պահէ:

Յետաքրքրականը ա՛յն է, որ Յաւելայի տանտիկիններուն համար խոհագիրի մը վաւերականութիւն տուողը իր ընկերուհիները կ'ըլլան եւ ոչ՝ ըսեք նշանաւոր խոհարար մը, որուն գիրքէն առնուած ըլլայ, կամ գոնէ ճշդուած ըլլայ խոհագիրք:

Ահա թէ ինչո՞ւ մենք, հայերս, խոհագիրքերու մշակոյթ չունինք, - ի՞նչ գիրքերու մշակոյթ ունինք, որ խոհագիրքերունը ունենանք: Մատի վրայ կը համրուին հայերէնով գրուած խոհագիրքերը, որոնց մէջ կարելի է նաեւ արտառոց երեւոյթներու հանդիպիլ, օրինակ՝ ամերիկաբնակ տիկին մը, իր անհատական միջոցներով հրատարակելու է մեծ, ամբողջութեամբ գունաւոր նկարներով զարդարուած խոհագիրք մը, որուն առաջին քանի մը էջերուն ընթերցումը անմիջապէս յստակ կը դարձնէ, որ ո՛չ տիկին հեղինակը, ո՛չ ալ գիրքին օրհորդ խմբագիրը խոհանոց մտած եւ այդ խոհագիրքերէն գոնէ՛ մէկը պատրաստած են:

Եւ արդէն գիրքը երկա՛ր ատեն մեծ խանութի դարակներէն մէկուն վրայ նստած գնորդի կը սպասէր ամառուան ամենէն խճողուած օրերուն: Յետոյ ձմրան կիսուն նուէր ստացայ գայն:

Յակառակ խոհանոցային գրադարանիս համեմատական ճիւղութեան, իւրաքանչիւր նոր գիրք գիս ուրախութեամբ կը լեցնէ, որովհետեւ նոր դուռ մը կը բանայ անծանօթ, թէկուզ կիսով ծանօթ աշխարհի մը վրայ:

Գիրքի եւ գիրի տարփանքս նաեւ խոհանոցին մէջ արտայայտուել է, որովհետեւ փոքրիկ խոհանոցիս քանի մը դարաններէն մէկն ալ տարբեր լեզուներով գրուած խոհագիրքերու յատկացուցեր եմ:

Ինչպէս ամէն «լուրջ» գրադարան կ'ունենայ իր բառարաններու եւ հանրագիտարաններու հաւաքածոները, իմ խոհանոցային գրադարանս ալ ունի իր հանրագիտարանը՝ հաստատփոր, մեծօրի մատեան մը, որուն համեմներու բաժինը անգլերէն բառերուն դիմաց ունի արաբերէն ու երբեմն նաեւ հայերէն անունները համեմներուն.

Coriander - cilantro - ganach kints - kezbara khadra

Basil - rehan - habak

Cumin - kimion - kammoun

Միչէն ամենէն անսովորը համեմներուն, ինչպէս cardamom-իէլը, որուն հայերէնը չեմ կրցած գտնել, պարզապէս որովհետեւ Յայաստանի մէջ հէլ չէ գտնուած եւ հայերը այդ համեմը գործածելու սովորութիւն չեն ունեցած:

Միայն վերջերս է որ հանդիպեցայ հէլ արաբերէն բառին հայերէնին՝ «մալխա»ին, որուն ինչու մը օտար արմատի մը գոյութիւնը կը յուշէ: Իրապէ՞ս օտար է արմատը մալխա բառին: Յր. Աճառեանը անոր դիմաց կը դնէ «հիլ» եւ «կակուլա» բառերը (այս վերջինը տիգրանակերտոցի հօրենական մեծ-մայրս կ'ըսէր). Գեորգ Ջահուկեանը կ'ըսէ՝ «մի բոյս, հիլ, ծագումն ան-

յայտ է», իսկ Վարդգէս Ուրիշեանը իր «Մեր արմատները նոր լոյսի տակ» բառարանին մէջ ընդհանրապէս չի յիշեր մալխա:

Այս գիրքին շնորհիւ էր, որ գիտցայ թէ կասիա-ն տարչին-ին «հայերէն» անունը չէ, այլ անունն է ուրիշ մշտադալար, դաբնիի ընտանիքէն ծառի մը, որ Չինաստանի եւ Մալթաի մէջ շատ տարածուած է եւ որ շատ նման է տարչինի ծառին (երկու ծառերուն ալ կոճղին արտաքին կեղեւն է մեր օգտագործած բաժինը): Մատեանիս մէջ կ'ըսուի.

«Ժողովուրդին մեծամասնութիւնը անկարող է տարբերել տարչինը (cinnamon) կասիայէն (cassia)»:

Խոհագիրքերէս մէկը ամուսինիս նուէրն է, մեր ամուսնութեան ամեակներէն մէկուն առիթով:

Քիչ գործածուած, բայց շատ փայլալուծ գիրք մըն է Tess Mallos-ի The Complete Middle East Cookbook-ը, («Միջին Արեւելեան Ամբողջական Խոհագիրք»):

Յոյն ծնողքէ Աւստրալիա ծնած այս տիկինը մասնագետ խոհարարուհի է եւ հեղինակ բազմաթիւ գիրքերու:

Գիրքը բաժնուած է գլուխներու, ըստ Միջին Արեւելքի երկիրներուն՝ Յունաստան, Կիպրոս, Թուրքիա, Յայաստան, Սուրիա-Լիբանան-Յորդանան, Իրաք, Ծոցի երկիրներ, Եմեն, Եգիպտոս, Իրան, Աֆղանիստան: Իւրաքանչիւր երկրի մասին նախաբան մը կայ: Յայաստանը ներկայացնող գրութիւնն է պատճառը, որ այս գիրքը շատ կը սիրեմ:

«Յայաստանը այսօր մաս կը կազմէ Խորհրդային Միութեան (գիրքը հրատարակուած է 1979-ին). թէն ոչ անկախ երկիր, սակայն հայերուն ազգային ոգին կը շարունակէ ապրիլ Սովետական Յայաստանի ժողովուրդին մէջ, որ պատմական դէպքերու պատճառով տարածուած է աշխարհի չորս ծագերուն: Յայերը հաստատուած են, որ թէն բացայայտ թշնամանքը փոխած է իրենց ճակատագիրը, սակայն չէ կրցած փոխել ոգին: Ծատ տպաւորիչ է, որ հայերը պահած են իրենց լեզուն, կրօնը, բարքերն ու սովորութիւնները, հակառակ բոլոր խոչընդոտներուն»:

«Երկրի մը խոհանոցը հասկնալու համար պետք է քիչ մը բան գիտնալ այդ երկրի պատմութենէն: Կը կասկածիմ, որ երբեւէ եղած է երկրի մը, որ այնքան փոթորիկներէ անցած է, որքան Յայաստանը, եւ որուն մասին աշխարհը այնքան քիչ բան գիտէ: Թերեւս Յայաստանի մասին որոշ տեղեկութիւններ ունենալը լոյս սփռէ Մերձարեւելի Միջին արեւելեան խոհանոցին վրայ, որ նախապէս հակասական կարծիքներու առարկայ դարձած է»:

Այս երկու հատուածներէն ետք հեղինակուհին յարգելի հմտութեամբ կը ներկայացնէ Յայոց Պատմութիւնը, իր լայն եւ լաւագոյն գիծերուն մէջ, որմէ ետք կ'անցնի «Յայկական խոհանոցին համը» գլխաւոր բաժնին:

Ըստ տիկին Մալլոսի, հայկական խոհանոցը պարզ է եւ Յայաստանի ջուրտ ու պաղ եղանակին շատ յարմար: Անոր համեմները բիւզանդական շրջանը կը յիշեցնեն: Բրինձի, չամիչի, սոխի եւ սոնապրիի խառնուրդը այդ շրջանէն մնացած ժառանգութիւն մըն է, որ խորքին մէջ «ուղղափառ հաւատքին կը պատկանի, ըլլայ աստիկա Յայ, Յոյն թէ Արեւելեան եկեղեցին»:


Զմե՛ գիտեր թէ ինչո՞ւ եւ ինչպէ՛ս Թ. Մալլոս մանթին «պարզ» կը գտնէ. կը կարծեմ, որ այսօրուան նոյնիսկ հալեպահայ երիտասարդ տիկինները շատ բարդ պիտի գտնեն մանթի պատրաստելը եւ պիտի նախընտրեն ՍՕ-Խի (Սուրիահայ Օգնութեան Խաչ) «Փեթակ» խոհանոցէն պատրաստ գնել:

Այս գիրքին մէջ որպէս հայկական ճաշեր ներկայացուած են նիվիք, տերեւ փաթթուկ (սարմա), թօփիկ, երեբունի, հերիսա (այս ճաշատեսակը մաս կը կազմէ նաեւ արաբական խոհանոցին. անունն իսկ կը հաստատէ անոր արաբական ծագում ունենալը, որովհետեւ բառը ճգմուած կը նշանակէ, թէն հարել բառին հետ նմանութիւնը կրնայ ճիշդ հակառակը փաստել. բայց Աճառեան արմատական բառարանին համեմատ, հայերէն բառերուն կարելու մէջ մասը արաբական-պարսկական ծագում ունի. այսինքն նախ արաբները հերիսա պատրաստել են, յետոյ՝ հայերը, եւ օգտագործել՝ հարել բառը. ուրեմն՝ հա՛ւը հաւկիթէն, թէ՛ հաւկիթը հաւէն: Այս վեճն ալ կրնայ ապարդիւն ըլլալ, եթէ հաւատք ընծայենք Նոյին, Տապալան եւ գոյգ կենդանիներու առասպելին. ուրեմն «փրկուած» հաւ մը եւ աքլոր մը եղած են նախ, ու յետոյ միայն՝ հաւկիթը ...: Վեճերը ուրտեղէր կրնան տանիլ մեզ ...), ջուրի պտօրէկ (սու պտօրէկ), խառն թթուաշ, լուրիա թթուաշ, ծաղկակաղամբի թթուաշ (այս բոլորը գրուած են իրենց հայերէն անուններով, բայց լատինատառ. եւ այսպէս՝ dzaghgagaghampi ttvash. խեղճ օտարը ինչպէ՞ս պիտի կարդայ ց-երու այս խճողումը, չեմ գիտեր), կլոր քեթէ, շեյրեյի եղինձ, մանթիապուր, մանթի, հաւկիթով շոմին, ծեծած թանապուր, ոսպով ապուր, Արաբկիրի թօփիկ, գատիկ աղցան, ուլուականջ լիցք, սըմբուկի եւ միսի խորոված (ասիկա Ուրֆա քեպպալը ըլլալու է), աղցուած գետնախնձոր, խառն լիցք պլուրով, անուշապուր, թափիկով հաց, խորշաֆ, թան, տարչինով թէյ:

Այս ցանկէն յստակ է, որ երբ Խորհրդային Յայաստան կ'ըսէ, հեղինակուհին նկատի ունի հայկական ամբողջ խոհանոցը՝ պոլսականն ու գաւառականը միատեղ:


Պոլիսը, որ ծովագերեայ քաղաք է, իր ճաշացանկին մէջ ոչ միայն ձկնեղէն, այլ եւ ծովու պտուղներ ունի, ինչպէս ուլուականջը կամ ձկնականջը, որ mussel տեսակն է եւ որուն լիցքը՝ stuffed mussels մենք՝ հալեպահայերս, չենք գիտեր պատրաստել:

Իւրաքանչիւր խոհագիրք առաջ հակիրճ ծանօթութիւններ տրուած են. օրինակ հերիսային համար կ'ըսուի, թէ աւանդութիւն էր գայն նոր տարուան սեղանին դնել: Յալեպի մէջ այլ է սովորութիւնը՝ նոր տարին պետք է ճերմակով սկսիլ. եւ ի՞նչ կայ աւելի համեղ «ճերմակ», քան մածուկով քիւֆ-





# ԵՐԿՆԱՅԱՄ ԵՐԿԻՐԸ



Սուսթել Արթ. Գաստեհճեան

Հազար փառք ու գոհութիւն կ'առաքեմ առ Բարձրեայն Աստուած, որ այս տարի եւս մեզ արժանի պիտի դարձնէ ազգովին տօնախմբելու եւ յիշատակելու մեր Տիրոջ ու Փրկչին՝ Յիսուս Զրիստոսի Ս. Պայծառակերպութեան կամ մեզի ծախսօր Կարդավառի տօնը:

Հոս կ'ուզեմ Պայծառակերպութեան դրուագը պատմել, որպէսզի վերյիշենք եւ վերաթարմացնենք զայն մեր մտապաստառներուն մէջ: Աստուածորդին իր տասներկու առաքելներէն երեքը՝ Յակոբոսը, Յովհաննէսը ու Պետրոսը իր հետ առնելով Թաբոր լեռ բարձրացաւ, որպէսզի անոնք առանձնապէս աղօթեն: «Եւ մինչ կ'աղօթէր (Յիսուս), Անոր դէմքը այլակերպուեցաւ եւ հագուստը փայլուն սպիտակ գոյն առաւ» (Ղկ 9.29): Ինչ կը պատշաճի հոս յիշել Սաղմոսասացին հետեւեալ խօսքը. «Լոյս հագեր ես (ո՛վ Աստուած) վերարկուի պէս» (Սղ 104.2): Յանկարծ կ'երեւին օրէնքը ներկայացնող Մովսէսն ու մարգարէութիւնը ներկայացնող Եղիան, որոնք «Կը խօսէին Յիսուսի հետ՝ իր մահուան մասին, որ պիտի պատահէր երուսաղէմի մէջ» (Ղկ 9.31): Երբ Հին Կտակարանի ներկայացուցիչները կը մեկնէին, երանական ու երկնային պահը արող երեք առաքելներէն մէկը՝ Պետրոս երկնահամ ուրախութեան զգացումը չկորսնցնելու համար երկնապարգեւին՝ Զրիստոսի դառնալով կը բացագանչէ. «Տէ՛ր, ի՛նչ լաւ կ'ըլլայ որ հոս մնանք. եթէ կ'ուզես՝ երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի եւ միւսը Եղիայի համար» (Մտ 17.4): Տակաւին Պետրոս կը խօսէր, երբ լուսաւոր ամպ մը ծածկեց երկինքը եւ ձայն մը լսուեցաւ, որ կ'ըսէր. «Այս է Իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ, Անոր մտիկ ըրէք» (Մտ 17.5):

րին եւ արագ է լեռ բարձրանալու գործընթացը, որովհետեւ գոյ են յատուկ ու արդիական գործիչներ եւ զգեստներ: Սակայն Զրիստոսի Պայծառակերպութեան ժամանակ վիճակը այդպէս չէր: Այս մէկը լաւապէս կարելի է փաստել, երբ նկատի ունենանք, թէ համատեսական աւետարաններուն՝ Մատթէոսի, Մարկոսի եւ Ղուկասու աւետարաններուն հեղինակները յիշելէ ետք Զրիստոսի հետեւելու պայմանները անմիջապէս կ'արձանագրեն, թէ վեց կամ ութ օրեր ետք Զրիստոսն ու երեք առաքելները լեռ բարձրացան (հմմտ. Մտ 17.1, Մր 9.2 եւ Ղկ 9.28), առանց յիշելու, թէ անոնք ի՛նչ ըրին այդ օրերուն ընթացքին: Վստահաբար առաքելները մեծ դժուարութեամբ լեռ բարձրացած էին, սակայն երբ անոնք տեսան «զփառս Որդոյն Աստուծոյ», մոռցան իրենց յոգնաբեկ վիճակը եւ Պետրոս առաքելին բերով ըսին. «Տէ՛ր, ի՛նչ լաւ կ'ըլլայ որ հոս մնանք» (Մտ 17.4):

Երբ լաւապէս ուսումնասիրենք Պայծառա-



կերպութեան լեռան՝ Թաբոր լեռան (ոմանք Պայծառակերպութեան լեռը Հերմոնը կը նկատեն) վիճակը, պիտի տեսնենք, թէ անիկա գիշերելու կամ զբօսնելու հաճելի վայր մը չէր, որովհետեւ քարքարուտ եւ լեռն լեռ մըն էր: Սակայն Պետրոս առաքելը եւ միւս երկու առաքելները այնքան արթեցած էին Տիրոջ եւ Անոր սուրբերուն՝ Մովսէսի եւ Եղիայի ներկայութեամբ, որ չզգացին անգամ լեռան տհաճ տեղ մը ըլլալը: Նոյնը նաեւ մեզի կը վերաբերի սիրելի՛ ընթերցողներ. մենք կ'ապրինք աշխարհի մը մէջ, որ այդքան ալ հաճելի, հանգիստ եւ ցաւազուրկ վայր մը չէ, սակայն երբ ամենօրեայ դրութեամբ ապրեցնենք Տէրը մեր մէջ, արթենանք Անոր ներկայութեամբ եւ ապրինք իբրեւ երկնաքաղաքացիներ, այլեւս ո՛չ աշխարհի «քարքարուտ» վիճակը կը զգանք, ո՛չ ալ անոր տհաճութիւնը կ'ապրինք, այլ միայն Սաղմոսագիրին հետ կը բարձրադաղակենք. «Միշտ Տէրը իմ դիմացս ներկայ ունիմ» (Սղ 16.8):

Իրականութեան մէջ, Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս առաքելները ապրեցան այն վիճակը աւելի ճիշդ՝ վայելքը, որ վերապահուած է քրիստոնէական համար երկինքին մէջ: Մեր քրիստոնէական հաւատքին համաձայն, անոնք որոնք այս աշխարհի մէջ կ'ապրին ու կ'աշխատին երկինքի համար, Աստուծոյ Արքայութեան մէջ ամենասուրբ Երրորդութեան եւ բոլոր սուրբերուն անմիջական ներկայութիւնը պիտի վայելեն. «Արդարները Աստուծոյ ներկայութեան պիտի ուրախանան ու ցնծան, ու հրճուանքով պիտի խայտան» (Սղ 68.3): Այս իմաստով, Պայծառակերպութեան դրուագը փաստը մը եւ նախաձեռնակ մը ըլլալու կողքին, ան խրախուսիչ եւ մղիչ մըն է հաստատուն կամքով երկնային կառչած մնալու:

«Տէ՛ր, ի՛նչ լաւ կ'ըլլայ որ հոս մնանք»: Այս

կյս աստուածակերպ դրուագին մէջէն «սրբտիս կը խօսի» հետեւեալ համարը, որուն մասին կ'ուզեմ խորհրդածել. «Տէ՛ր, ի՛նչ լաւ կ'ըլլայ որ հոս մնանք» (Մտ 17.4):

Այսպիսի արտայայտութիւն մը կրնայ միայն ունենալ այն անձը, որ կը ճաշակէ Տիրոջ ներկայութեան քաղցրութիւնը. «Ճաշակեցէ՛ք եւ տեսէ՛ք՝ թէ ի՛նչքան քաղցր է Տէրը» (Սղ 34.8): Պետրոս առաքելը յափշտակուած եւ վերացած վիճակի մը մէջ բարձրաձայնեց ու աղօթածայնեց այս նախադասութիւնը, որովհետեւ ան ապրեցաւ այն աննկարագրելի, աներեւակայելի, խորախորհուրդ, զգայացունց, հոգեթրթիռ, փշաքաղող, սրտահեղեղ եւ երանելի պահը, որն է հողեղէն աչքերով տեսնել Զրիստոսի աստուածութիւնը: Պետրոս առաքելը իր արտայայտութեամբ կարծեք Սաղմոսագիրին հետ կ'ըսէր. «Ներկայութիւնը (ո՛վ Տէր) զիս ցնծութեամբ կը լեցնէ եւ Քու մօտը ըլլալը յաւեն էրջանկութիւն է» (Սղ 16.11):

Հակառակ այն իրողութեան, որ Պետրոս առաքելը տարիքով առաքելներէն ամենէն երէցն էր, ինչ որ կը պարզէ, թէ ան աշխարհիկ կեանքի հաճոյքները եւ վայելքները կ'ապրէր ու կը վայելէր, սակայն երբ միայն ու սոսկ ԶԱՆԻ ՄԸ ՎԱՅՐԿԵԱՆ երկինքը վայելեց, ան երկիրը ամբողջութեամբ մոռցաւ եւ նոյնիսկ պատրաստուեցաւ վրաններ կանգնեցնելու (Մտ 17.4), որպէսզի անմասն ու անբաժին չմնայ երկնային երջանկութեան՝ աստուածային ներկայութեան: Պետրոսի այս հոգեվիճակը հրաւեր մըն է բոլորիս հոգեւին երկիրը ձգելու եւ երկինք փութալու՝ ապրելու համար Աստուծոյ բերկրաբեր ներկայութիւնը. «Ինծի համար երանութիւն է մօտիկ ըլլալ Աստուծոյ» (Սղ 73.28):

Այսօր ի տարբերութիւն Յիսուսի երկրաւոր առաքելութեան ժամանակաշրջանէն, անելի դիւ-

սրտագեղ եւ ջերմաբարբառ խօսքը պէտք է դառնայ մեզմէ իւրաքանչիւրին կեանքին ամենօրեայ բնաբանը: Աստուծոյ ներկայութիւնը մեր կեանքին վառելիքն է: Ի՛նչ երջանկաբեր ու բերկրաբեր է, երբ ամեն Աստուծոյ օրը Աստուծոյ հետ կը սկսինք, իր կողքին կ'ըլլանք, կը զգանք Անոր ներկայութիւնը, կը լսենք Անոր մեղրանոյշ ձայնը եւ կը խօսինք Անոր հետ: Ի՛նչ սքանչելի բան է զԱստուած ապրիլ եւ ապրեցնել: Այն ատեն մենք Պետրոս առաքելին նման պիտի չգիտնանք, թէ ինչ կ'ընենք (հմմտ. Ղկ 9.33), բայց երբեք պիտի չուզենք դադարիլ այդ մէկը զգալէ:

Յետեւաբար, սիրելի՛ ընթերցաւորներ, Զրիստոսի Պայծառակերպութեան տօնը մեզ կը հրաւիրէ պայծառակերպուելու, հոգեւին վերանալու այս աշխարհէն երթալու համար դէպի մեր հոգիներուն Թաբոր լեռը, ուր Յիսուս մեզ կը սպասէ, որպէսզի միասնաբար պայծառակերպուինք: Ուստի աղօթքի մեր ցուպերը առած, սկսինք Պայծառակերպութեան լեռը մագլցիլ, որպէսզի Աստուծոյ եւ բոլոր սուրբերուն անմիջական ներկայութիւնը վայելենք եւ Պետրոս առաքելին հետ «համարձակաձայն բարբառով» ըսենք. «Տէ՛ր, ի՛նչ լաւ կ'ըլլայ որ հոս մնանք» (Մտ 17.4):

Սնտիկիաս, Լիբանան

# ԽՈՂ, ԽՈՂԱՆՈՑ,...

Սկիզբ՝ էջ 7

թեն՝ այնպէս պիտի տեսնուի, ճրագուի միջուկով:

Յերիսա՛ն ալ ճերմակ կը համարուի, թէ՛ արեւելահայերուն ծանօթ չէ քիւֆթներու աշխարհը. թէ՛ ստեղծեր ենք կոլուլակ բառը, բայց քիւֆթն կայ ու կը մնայ հալէպեան խոհանոցի կայսրուհին ...

Ձրոտ պտօրէկին եւ մանթիին առիթով հեղինակուիին հետաքրքրական ծանօթութիւն մը կու տայ.

«Հայկական մանթին կ'օգտագործէ խմորի պարզ տեսակ մը, իր սկզբնական տարբերակին մէջ, որ կու գայ մոնկոլական ազդեցութենէն (մոնկոլները հեռաւոր հարաւ, մինչեւ Թուրքիա չէին հասած). ջրոտ պտօրէկը կրնայ նոյն այդ ժամանակաշրջանէն եկող զարգացած տարբերակ մը ըլլալ»:

Խոհագիրքերուս մէջ զանազան-զարմանազան գիրքեր կան, աշխարհի չորս ծագերէն եւ ութը անկիւններէն հաւաքուած, ուր հաւը կարելի է նաեւ շոքոլայով եփել, կամ պանանով եւ միսով ճաշ պատրաստել:

Այդ զարմանազան գիրքերէն մէկն ալ զարմուհիիս հեղինակութիւնն է. այնտեղ իւրաքանչիւր խոհագիր առնչուած է ոչ անելի ոչ պակաս բան ... Աստուածաշնչական հատուածի մը:

Գիրքի շապիկին վրայ կը կարդանք. «Խոհագիրքը «օրիժնայ» կամ անսովոր չէն, մեր, Արեւելքի հայերուս ամենօրեայ ճաշերն են»:

Բայց ի՞նչ է առնչութիւնը օրինակ ոսպով ապուրին եւ Մատթէոսի Աւետարանի 7:7-8 հատուածին: Հեղինակուիին, մէջբերելէ ետք տուեալ հատուածը, առնչութիւնը նշած է.

«Օգտագործեցէ՛ք ձեր գիտութիւնն ու իմաստութիւնը գործ մը կատարելու ընթացքին: Օգտագործեցէ՛ք ձեր տաղանդը, կեանքը յառաջ տանելու համար: Օգտագործեցէ՛ք ձեր երեւակայութիւնը արուեստի գործ մը ստեղծելու համար: Կարդացէ՛ք վերի հատուածը, յետոյ հետեւեցէ՛ք խոհագրին եւ խոհանոցային արուեստի գործ մը ստեղծած պիտի ըլլաք»:

Ամեն տեղ Աստուած է արուեստ, նոյնիսկ ... ոսպով ապուրին մէջ: Ինչո՞ւ չէ...



## ԸՆԿՐ. ՅԵՐՄԻՆ ՇԱԽԻՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յոթի Կանանեան

Գաղթաշխարհի հայ դպրոցի պատմութեան մէջ Ազգ. Սահակեան վարժարանը ունի իր ինքնուրոյն տեղը:

Մոռացութեան յանձնել գայն՝ կը նշանակէ ուրանալ այն արժէքները, որոնցմով կը կերտուի մեր մշակոյթը:

Կոտորածէ փրկուած եւ Սուրիա ապաստանած մեր հայրենակիցները առաջին հերթին կը մտածեն դպրոց ու եկեղեցի կառուցել, փրկելու համար հայկական հոգին, որ ունէր գեղեցկութեան հրաշքը: Կը հաւատար իր անմահութեան, իր մեծութեան եւ յառաջդիմելու կարողութեան: Այդ բոլորը գինը կը մղէին խորհելու, թէ ազգի գաւազներուն փրկութիւն կրնար գալ միայն մշակոյթի եւ դաստիարակութեան հնոցներէն՝ հայկական վարժարաններէն:



Ահա թէ ինչո՞ւ Յալայի մէջ, յաջորդաբար, շիտուեցան վարժարաններ, կազմելով պատմութիւնը հալայահայ դպրոցներուն:

1927-ին Նոր Գիւղի մէջ կը հաստատուի Ազգ. Սահակեան վարժարանը, լայնատարած դաշտի մը մէջ, անձուներ ազգայիններու լուսններով: Այդ քարաշէն դպրոցը կ'ըլլայ Սահակեան մանկապարտեզի շէնքը, որուն հողատարածքին վրայ հետագային կը կառուցուի Ազգապատկան «Սիւ Յամալիք»:

Սկիզբը մանկապարտեզ եւ նախակրթարան լոյն շէնքը օգտագործած են, ու հոն աշակերտած է օր. Յերմին Շահինեան: Ան 6-րդ կարգէն շրջանաւարտ եղած է 29 Յունիս 1947-ին, տնօրէն Եղուարդ Տասնապետեանի եւ դաստիարակ Նափուլէն Յազոյեանի շրջանին:

1952-ին օր. Յերմին արդէն իսկ ուսուցչուհի է՝ Սահակեան մանկապարտեզի բողբոջ դասարանի, տնօրէն ունենալով Արտաշէս Տէր Յովհաննեսեանը, իսկ դաստիարակ՝ Նափուլէն Յազոյեանը:

Այդ տարիներուն դպրոցը ունեցած է Շրջանաւարտից Միութիւն, որ նախաձեռնած է քառաձայն երգչախումբի մը կազմութեան, խմբավարութեամբ արն. Վարդան Սերայտարեանի:

1947-ին այդ երգչախումբը, որուն մաս կազմած էր Նաեւ ընկհ. Յերմին, ելոյթ կ'ունենայ մեծանուն քննադատ եւ դաստիարակ Յակոբ Օշականի յորելիական հանդիսութեան:

Յետագային, շատ տարիներ վերջ, Ամերիկայի մէջ կը վերակազմուի Ազգ. Սահակեան վարժարանի Շրջանաւարտից Միութիւնը, որուն վարչակազմին մէջ կը տեսնենք Նախկին ուսուցիչներ, տնօրէններ եւ աշակերտներ, ինչպէս՝ օր. Յերմինի եղբայրը՝ Օննիկ Շահինեանը: Անոց օժանդակութիւնները կը փոխանցուին վարժարանի հոգաբարձութեան՝ առ ի օժանդակութիւն սաներու ուսման:

Յերմին Շահինեան յաջորդաբար գործած է Ազգ. Սահակեան մանկապարտեզէն ներս, մանկապարտիզ պանուհիներ ունենալով.-

- Նուարդ Միրասիտեան
- Լուսին Բարսեղեան

Մարի Զիթիշեան  
Պայծառ Սարաֆեան  
Նուարդ Փամպուքեան  
Վանուհի Իսաջանեան  
Արփի Շահինեան  
Յոթի Կանանեան  
Քնարիկ Լաքլաքեան  
Չեփիւռ Էքմէքճեան

**Տնօրէններ.-**  
Եղուարդ Տասնապետեան (1941-1950)  
Արտաշէս Տէր Յովհաննեսեան (1951-1955)  
Եղուարդ Էլոյեան (1956-1963)  
Քրիստափոր Իֆատեան (1963-1965)  
Նազարէթ ՍապուՆճեան (1965-1969)  
Մանուէլ Չարշաֆճեան (1969-1971)  
Յրայր Մանուկեան (1971-1975)  
Ասատուր Պօղոսեան (1975-1979)  
Յայկազ Ասատուրեան (1979-1980)  
Օգսէն Ադամեան (1980-1981)  
Կարո Իւզպաշեան (1981-1983)  
Ժիրայր Րէիսեան (1983-2010)  
Եթէ մեզմէ որեւէ մէկը ներդրութիւն յանձն առնէ եւ պրպտէ հին թղթածրարները, կարգայ փոշիներուն մէջ թաղուած տետրակները, հոն պիտի տեսնէ նուիրումի, գոհաբերութեան, անվիաս գործունեութեան սքանչելի ոգի մը, թերեւս քիչերու կողմէ ճակչցուած եւ քիչ անգամ արժանապէս գնահատուած:

Օր. Յերմին Շահինեան անոցմէ մէկն էր: Երկար տարիներ եղած էր բարոյական ուժ կիրարկող եւ իր քրտինքով ընտանիքին վաստակը ապահովող դաստիարակ մը:

Հաւատքով շարունակած էր իր գործունեութիւնը, առաւելագոյնը ընծայաբերած էր անհուն նուիրումով, մոռնալով երիտասարդուհիի վայելքները: Օրինակ ծառայած էր ուրիշներուն՝ իր ճշմարիտ նուիրաբերումով եւ բարձր ոգիով:

Արդեօ՞ք ասոնք չէին հիմնական պատճառները իր 41 տարիներու աշխատանքին, երբ Յերմինը կանգնեցաւ ուսուցչութեան գեղեցիկ պատուանդանին վրայ:

Ազգային Սահակեան Մանկապարտեզը բախտաւորութիւնը ունեցաւ իր մէջ ունենալու այս հաւատաւոր դաստիարակը, որ ներքին մանրուկ վեճերը անտեսելով, իր տեսակետը պարզելու լաւագոյն եւ համոզիչ ձեւը գիտէր:

Իր սորվեցուցած երգերն ու արտասանութիւնները ջիւշ ու մաքուր էին իր հոգիին պէս:

Արտակարգ խանդավառութիւն ու ոգեւորութիւն կը ստեղծէր դասարանէն ներս, խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով: Սիրուած էր իր աշակերտներուն եւ ուսուցչական կազմին կողմէ՝ իր ջերմ, ընկերասէր բնաւորութեան շնորհիւ:

Այս բոլորը վերոյիշելով այսօր կը սգանք իր մահը, առանց մոռնալու տակաւին ՍՕ Խաչէն ներս իր գործունեութիւնը:

Անդամակցած էր ՍՕ Խաչի Նոր Գիւղի մասնաճիւղին: Եղած էր արծուիկ խորհուրդի անդամ, թերեւս 1968-1980 թուականներուն: Յաջորդաբար քանի մը տարիներուն ընտրուած էր այժմու «Նայիրի» Մասնաճիւղի վարչական 1993-1996:

Տակաւին պաշտօն վարած էր ՍՕ Խաչի Աշխատանոցի, ապա Մանկամտերի յանձնախումբերէն ներս: Մասնակցած էր մասնաճիւղի ընդհանուր ժողովներուն եւ Շրջանային Պատգամաւորական ժողովներուն:


Եւ յանկարծ այս բոլորը կանգ առին ու մեր կապը իր մահով ընդհատուեցաւ վերջնականապէս: Երախտապարտ ենք իրեն, որ բաժնեկից դարձաւ իր շրջապատի ուրախ եւ տխուր վայրկեաններուն ու կորով ներշնչեց բոլորիս:

Պիտի մնաս մեր բոլորին, Նաեւ քու շունչով մեծցած հազարաւոր աշակերտներու մտքին ու սրտին մէջ:

### ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ

Համագործակցաբար Սուրիոյ Պատանեկան Միութեան Ընդհ. Վարիչ Մարմինին հետ, «Գանձասար» այս սիւնակով պիտի հրատարակէ պատանեկան Նոր գրիչներու առաջին փորձերը՝ քաջալերելու անոնց մուտքը հայ մամուլ:

### ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ



Եսթեր Կիւտալեան

Բացարձակապէս դիւրին չէր 2021-2022 ուսումնական տարեշրջանը: 2021-ի ամառը իսկապէս շատ հաճելի էր, չէինք մտածեր դասերու մասին: Ես եւ ընկերուհիներս մեր ժամերը միասնաբար վայելելով բոլորեցինք արձակուրդը: Այդպէս ալ պետք էր ընկնք: Հակառակ որ ուրիշներ նախընտրեցին արձակուրդը դաս սորվելով անցընել: «Ամէն բան իր ժամանակին պետք է ընել ու վայելել: Արդէն դասերը կրկնելէն պիտի ծանծրանանք, ի՞նչ կարիք կայ ամառուրնէ դաս սորվելու», կը խորհէի:



Ուրախ եմ, որ չեմ գոչացած այս որոշումը անելուս համար: Ամբողջ տարեշրջան մը աշխատեցանք ու յոգնեցանք, իսկ հիմա կը սպասենք պրովէր արդիւնքներուն:

Քննութիւնները աւարտելէն անմիջապէս ետք սկսանք հանդէսի փորձերուն: Այն փորձերը, որոնց կը սպասէի տարիէ մը ի վեր: 9-րդ կարգի առաջին օրերէն կը մտածէի մեր շքեղ հանդէսին մասին: Անհամբեր էի ու միշտ կ'ուզէի իմանալ, թէ ե՞րբ պիտի հասներ այդ օրը:

Շաբաթ, 25 Յունիս 2022-ն էր սպասուած օրը: Փութկոտ կը սպասէի հանդէսի սկսելուն: Ժամերը շա՛տ արագ անցան: Յետմիջօրէի ժամը 6:30-ին հաւաքուեցանք Ազգային Քարէն Եփփէ Ծեմարանի շրջափակը: Բոլորիս ուրախութիւնը անսահման էր: Ժամ մը իրարու հետ խնդալ-խօսելէ ետք, պետք էր քուլիս անցնելնք, որովհետեւ ժամը 7:30-ը կը հասներ:

Հանդէսը սկսաւ հանրապետութիւններու գոյգ քայլերգներով ու հայերէն եւ արաբերէն բացման խօսքերով: Ետքը ներկայացուցինք ասմունք, Նուագ, Ծեմարանի 75-ամեակի պատկեր եւ հանդէսը փակուեցաւ վկայականներու բաշխումով: Բեմը կարծէք մեր աշխատանքի արդիւնաւորման բերկրանքը կը հաղորդէր:

Չգացումներս անբացատրելի էին, երբ նետեցինք մեր գլխարկները ու իրար փաթթուեցանք ուրախութեան արցունքներով: Իսկապէս անմոռանալի վայրկեաններ էին: Չիրար շնորհաւորելէ ետք ուղղուեցանք դէպի Տիգրանեան պարտեզ՝ ամբողջացնելու այս անմոռանալի օրուան յիշատակները:

Ժամերը անցան պարելով ու հաճելի մթնոլորտով: Չէի ուզեր, որ օրը աւարտին հասնի... Լուսաբացին՝ ժամը 3:30-ին, երբ տուն վերադարձանք, տակաւին չէի յոգնած ու եռանդը կը պատէր հոգիս: Ուրախութիւնս անսահման էր:

Վերջապէս կրնամ հաստատել, որ մեր հանդէսը եղաւ 9-րդ կարգի երկար ճամբորդութեան վերջնաթեր կանգամը: Եզրափակիչը՝ արդիւնքներու յայտարարութիւնն է:

«Արամ Մանուկեան» Մասնաճիւղի կարգ



## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

### ԽՈՑ



Աշխատանքի նոր առաջարկ մը ձեր տնտեսական վիճակը պիտի բարելաւէ: Մի՛ մերժէք առաջարկը եւ արդարացուցէ՛ք ձեզի հանդէպ վըստահութիւնը:

### ՑՈՒԼ



Միտք խոստովանութիւն մը ձեզ լուրջ որոշումի պարտադրանքին տակ կրնայ դնել: Պատահականութեան մի՛ թողուք ձեր կեանքի կարեւոր որոշումները:

### ԵՐԿՈՐԹԵԱԿ



Ձեր ծրագիրներուն մասին պարզ ամտութեամբ կը խօսիք՝ նախքան անոնց իրականացումը, ինչ որ ուրիշներ կը մղէ նոյն բանը ընելու ձեզ մէջ առաջ, երբեք գերազանցելով ալ ձեզ:

### ԽԵՑՁԵՏԻՆ



Ընկերային մանր-մունր վեճերը մի՛ բարդացնէք: Տարակարծութիւնը բնական է ընկերային կեանքի մէջ:

### ԱՌԻԾ



Նոր շրջանակներ թափանցեցէ՛ք եւ մի՛ սահմանափակուիք ձեր ներքին միջավայրով: Հակառակ պարագային ձանձրոյթը պիտի կրծէ ձեր հոգին:

### ԿՈՅՍ



Ինքնավստահ էք: Ինչ բանի որ նախաձեռնէք պիտի յաջողիք եթէ համբերատար ըլլաք ու քայլ առ քայլ յառաջանալ փորձէք:

### ԿԵՒՈՔ



Լարուած աշխատանքի մէջ էք: Բնաւ չէք մտածեր հանգստանալու եւ կազդուրուելու մասին: Հանգիստի ժամեր ունեցէ՛ք եւ լիցքաթափուցէք, յատկապէս օգտուելով ամառնային արձակուրդներէն:

### ԿԱՐԻՃ



Կը համակրիք ձեր աշխատակիցին: Սիրային կապ մը կրնայ գարգանալ ձեր միջեւ, եթէ համարձակօրէն արտայայտուիք ու առիթ տաք ձեզի մօտեցում ցուցաբերողին:

### ԱՂԵՂԱՊՈՐ



Լաւատեսութեամբ պիտի յաղթահարէք ամէն դժուարութիւն ու կարօտ: Հարազատներու բացակայութիւնը պիտի չընկճէ ձեզ:

### ԱՅԾԵՂՋԻՐ



Միութենական կեանքի մէջ ընկերային պէտք է ըլլալ ու չմեկուսանալ, որքան ալ որ բարդ բնաւորութեան տեր անձ ըլլաք:

### ՁՐՀՈՍ



Յաճախ ձեր շրջապատը կը քըն-նադատէ, առանց անդրադառնալու թերի երեւոյթներու բուն պատճառներուն: Աւելի խորքային դիտարկեցէ՛ք երեւոյթները:

### ՁՈՒԿ



Երկար աշխատանքէ ետք, վերջապէս պիտի յաջողիք բարելաւել ձեր նիւթական վիճակը: Բախտախաղերու մի՛ հաւատաք, միայն ձեր ճիգերուն վստահելով յաջողութեան կրնաք հասնիլ:



## ՋՈՒՐԸ ՀԱՅՈՑ ՀԱՄԱՏԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ԿԵՆՑԱՂԱՎԱՐԱԿԱՆ ԾԵՍԵՐՈՒՆ ՄԷՋ

Կենսական անհրաժեշտութեան բերումով ջուրը միշտ համարուած է կեանքի գոյութեան սկզբնաղբիւրը: Հին յուն փիլիսոփայ Արիստոտելը գայն դասած է բնութեան 4 հիմնական տարրերու (կրակ, օդ, հող եւ ջուր) շարքին: Պատահական չէ, որ ջուրը վաղնջական ժամանակներէն եղած է նաեւ պաշտամունքի առարկայ, հիմք ու աղբիւր դարձած է առասպելական բազմազան նիւթերու: Ջուրը իբրեւ մաքրութեան խորհրդանիշ հին ժամանակներէն մաս կազմած է կրօնական տարբեր արարողութիւններու, որոնք գանազան դարաշրջաններու մէջ յարատեւելով ու փոխակերպուելով կրօնական այլազան պատկերացումներ, հասած են մինչեւ մեր օրերը:



Վարդավառին, որ կը համարուի Անահիտ եւ Աստղիկ աստուածուհիներու տօնը, ջուր սրկելը եւ աղանի ազատ արձակելը եղած են այնպիսի սովորութիւններ, որոնք վկայած են ջուրին եւ աղանիին հանդէպ մեր աստուածուհիներուն հետաքրքրութիւնը: Իրար վրայ ջուր թափելու կրօնական-հեթանոսական արարողութիւնը, որ սկզբնականօրէն կը միտեր ներգործել բնութեան վրայ, հետեւելով մարդու օրինակին, որ պտղաբերութեան հասնելու համար անձրեւ կը խնդրեր իր դաշտերուն եւ արտերուն համար:

Հետագային քրիստոնէական եկեղեցին իր ծիսակարգին մէջ համադրած է քրիստոսի Պայծառակերպութիւնը՝ Թաքոր Լերան վրայ՝ ոչ միայն պահպանելով տօնին հին անունը՝ Վարդավառ, այլեւ այն ծեսերն ու արարողութիւնները, որոնք կատարուած են այդ օրերուն: Աղանի ազատ արձակելու եւ ջուր թափելու սովորութիւնները յարմարած են համաշխարհային ջրհեղեղին ու Նոյեան աղանիին հետ, իսկ Աստղիկ դիցուհին համարուած է Նոյի դուստրը՝ կրօնական տեսակետով օրինականացնելով անոր հեթանոսական պաշտամունքի պահպանումը ժողովրդական արարողութիւններով:

Ծանօթ է նաեւ, որ հայերուն համար Վահագնը՝ որպէս կայծակի ու հուրի աստուած, որ կռուած է վիշապներուն դէմ, համարուած է նաեւ ջուրերու ծովի ծնունդ: Արդարեւ, հայ ժողովրդական դիցազնաւեպին մէջ Եական տեղ գրուած է ջուրը: Այսպէս՝ «Սասնայ Ճճեր» դիցազնաւեպի նախնի հերոսները պատումներու մեծ մասին մէջ ծովէն յառաջ եկած են, ջուրը անոնց տարրն է: Ջուրը հերոսները կ'օժտէ նաեւ ուժով, ջուր խմելով անոնք արագ կ'աճին, կը մեծան, կը գօրանան ու ջուրի մէջ լողալով կ'ապաքինեն իրենց վերքերը ու նորովի կորով կը ստանան:

Պատումներէն մեկուն մէջ, երբ պատանի Սանասարն ու Պաղտասարը իրենց մօր եւ քահանային հետ կ'երթան Աղթամար, Սանասար հեռուն կը տեսնէ Առտեր կղզին: Ան լողալով կը հասնի կղզի ու կը տեսնէ, որ այնտեղ եկեղեցի մը կայ: Կը մտնէ ներս, կը քնանայ: Երբ ազնիւ մէջ Ս. Աստուածածինը կը յայտնուի ու Սանասարին կ'ըսէ, որ կղզիին մէջ քարայր մը կայ, ուր բազմաթիւ գէնք ու գրահ պահուած են: Կ'առաջարկէ առնել գանոնք, ապա ծովափը գտնուող քարին տակէն հանել սանձը, կախել ծովուն մէջ եւ քաշել: Այնտեղէն դուրս պիտի գար ծովային ձի մը՝ Զուռնիկ Ձալալին: Աստուածածինը Սանասարին կ'ըսէ նաեւ, որ դարպասին մօտ ջուր կայ, կ'առաջարկէ լողալ անոր մէջ, որպէսզի գօրանայ եւ կտրիճ դառնայ: Սանասար կ'արթննայ, կը կատարէ Ս. Աստուածածինին պատգամը ու կտրիճ կը դառնայ, կը հեծնէ Զուռնիկ Ձալալին ու դուրս կու գայ կղզիէն:



Վիպական այս դէպքը վեպի հերոսներուն համար ելակետային նշանակութիւն ունի՝ հերոսներուն ջուրով գօրանալը, իրենց ձի ու թուրի կայծակ ձեռք ձգելը եւ այլն:

**Ջուրը ժողովրդական ասոյթներուն մէջ**

Ժամանակակից հայերէնի մէջ, մասնաւորաբար ժողովրդային խօսակցական լեզուի մէջ լայն շրջանառութեան մէջ դրուած են ջուր բառով կազմուած անեծքները, օրինանքները, բարեմաղթութիւններն ու երգումները, որոնց մէջ ջուրը թէ որպէս կեանքի խորհրդանիշ՝ դրական իմաստով կ'արտայայտուի, ինչպէս. «Ջուրի պէս երկար կեանք ունենաս», թէ ալ ջուրէն գրկուելու անեծքի բացասական իմաստով, ինչպէս. «Մեռնիս, ջուր տուող մը չունենաս»:

**Ջուրը քրիստոնէական ծիսակարգերուն մէջ**

Ջուրը նշանակակից դեր ունեցաւ մեր եկեղեցւոյ արարողութիւններուն մէջ: Նկատի ունենալով ժողովրդի մէջ ջուրի պաշտամունքին տարածումը, մեր եկեղեցին ջուրին առնչուող հեթանոսական հաւատալիքներուն որոշակի ձեւափոխումներ տալով քրիստոնէական երանգ հաղորդեց անոնց ու հին աւանդութիւններէն բազում տարրեր պահպանեց իր ծիսակարգերուն մէջ:

**Օգտագործուած աղբիւրներ**

«Ջուրը Հայոց Հաւատալիքներում», Վաչագան Աւագեան, Հայկազեան Հայագիտական Հանդես, 2017

«Հին Հաւատք կամ Հեթանոսական Կրօնը Հայոց», Ղեւոնդ Ալիշան, Վենետիկ-Ս. Ղազար, 1910





Ռաֆֆի Սիլահեան

## ՏԵՂԱԿԱՆ

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Երկուշաբթի առաւօտ Հայաստան մեկնեցաւ Սուրիոյ ՀՄԸՄ-ի մարզական պատուիրակութիւնը, իր մասնակցութիւնը բերելու Երեւանի մէջ կայացած Համա-ՀՄԸՄ-ական 11-րդ մարզախաղերուն: Սուրիան իր մասնակցութիւնը պիտի բերէ Պասքեթի տղոց եւ աղջկանց մրցումներուն, պասքեթի 3 x 3 -ի, ֆութպոլի, ֆութսալի եւ ճատրակի մրցումներուն:

- Ինտոնեսիոյ մէջ կայացած Ասիոյ տղոց ախոյեանական առաջին փուլի մրցումներուն, Սուրիոյ կազմը կրեց երկու պարտութիւն: Առաջին հանդիպումին ան 67-80 արդիւնքով պարտուեցաւ Իրանէն, որմէ երկու օր ետք կրեց ծանր պարտութիւն մը Ճափոնէն՝ 117-56 արդիւնքով: Սոյն մրցումին ճափոնցիները յաջողեցան նշանակել 27 հատ երեք կետերու հարուած: Առաջին փուլի վերջին հանդիպումը տեղի ունեցաւ Կիրակի օր, ուր Սուրիա 67-76 արդիւնքով պարտութեան մատուցեց Ղազախստանը:



## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

### ԼԵԱՆՏՈՎԱԿԻ ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻՆ ՀԵՏ ՀԱՄԱՋԱՅՆՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐ

Շաբաթ օր քաթալոնեական Պարսելոնան պաշտօնապէս յայտարարեց, թէ կրցած է վերջնական համաձայնութեան հասնիլ Պայերն Միւնխի



յարձակողական խաղացող Ռոպերթ Լեւանտովսկիի հետ: Վերջին քանի մը շաբաթներուն ընթացքին Պարսելոնան խիտ բանակցութիւններ վարեց Պայերն Միւնխի պատասխանատուներուն հետ, եւ վերջապէս համաձայնելով նիւթական պայմաններուն, Պարսելոնան իր կայքով տեղեկացուց, որ

Լեւանտովսկի պիտի ժամանէ Պարսելոնա՝ կատարելու բժշկական քննութիւն, որմէ ետք պիտի ստորագրէ իր պայմանագրութիւնը: Ըստ Սպանական մամուլին, Լեւանտովսկիի պայմանագրութիւնը պիտի ըլլայ երեք տարուան տեւողութեամբ:

### ՌԱՈՒԼ ԿՈՆՉԱԼԵՍ Կ'ՈՒԶԷ ՄՆԱԸ ՌԵԱԼԻ ԽՈՒՄԲԻՆ ՀԵՏ

Սպանիոյ ՌԵԱԼ Մատրիտի նախկին խաղացողը, որ ներկայիս կը մարզէ ակումբի երիտասարդներու կազմը, մերժելով այլ ակումբներէ ներկայացած առաջարկները

փափաք յայտնած է մնալ մայրաքաղաքի արքայական խումբին հետ: Ըստ Մարքաթերթին, Ռաուլ մարզիչութեան առաջարկներ ստացած է Սպանիոյ, ԼԵԹՍ Իւնսյոնըտ եւ Անտրլախո Ֆրանքֆորթի ակումբներէն, սակայն ան փափաք յայտնած է մնալ ՌԵԱԼԻՆ հետ, ուր նպատակ ունի նաեւ ապագային ստանձնել առաջին խումբի մարզիչութեան պաշտօնը:



### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 399)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2		■				■						
3			■					■			■	
4				■								■
5					■				■			
6		■		■								
7										■	■	
8				■				■				
9		■					■					■
10	■		■									
11						■			■	■		
12												■

#### Հորիզոնական

1. Անուանումը ՀՄԸՄ-ի մարզախաղերուն, որոնք չորս տարին անգամ մը տեղի կ'ունենան. այս տարի 11-րդ մարզախաղերը տեղի կ'ունենան 20-30 Յուլիս 2022-ին, Հայաստանի մէջ:
2. Տառի մը անունը: Իգական անուն:
3. Կրկնուած բայաձայններ: Հակառակ՝ տառի մը անունը: Շաղկապ:
4. Հակառակ՝ գոց: Տառի մը անունը: Կրկնուած բաղաձայններ:
5. Հայ նահապետ: Հակառակ՝ շաղկապ:
6. Կրկնել:
7. Եօթերորդ տարեդարձ:
8. Արական անուն: Յոգնակերտ մասնիկ:
9. Իգական անուն: Պատուիանի դուրսի թել:
10. Առածը կ'ըսէ. «.....` ինք կ'իյնայ մէջը»:
11. Յարաբերական դերանուն: 2300: Երկինջիւն:
12. 27 Յուլիս 1983-ին տեղի ունեցած Լոզայնի գործունեութեան մասնակից ինճ երիտասարդներէն:

#### Ուղղահայեաց

1. Հայ ազգին վերաբերող: Հարցական դերանուն:
2. Շարունակ: 24 ժամ: Հակառակ՝ դաշտ:
3. Արգելական: Ճոխ, հարուստ:
4. Իգական անուն: Լայն ու տափակ անօթ:
5. Անվերջնատամ՝ ոչ Նոր: Զրիստոնեութիւնը Հայաստանի մէջ պետական կրօնք հռչակուած թուականը: Շեղ:
6. Անձնական դերանուն: Եական բայ: Հակառակ՝ ձայնանիշ:
7. Ծիլ արձակել: Յամաքային յաղթամարմին կենդանի:
8. Հակառակ՝ տարի: Հակառակ՝ հաստատական պատասխան: Դէպքի հանգրուան:
9. Օդ: ժամանում: Յոգնակերտ մասնիկ:
10. Ընդհանրական եկեղեցւոյ հայրապետ: Հակառակ՝ ողնասիւնը կազմող մակրո ոսկորներէն իւրաքանչիւրը:
11. Տարածքի միաւոր: Խառնատամ՝ շարժուն մեքենայի ուղղութիւն դրոշմող գործիչ:
12. Կոչանք: «Ուրախ .....» Սահակ Զորափորեցի Հայոց Կաթողիկոսին գրած շարականը, որ կ'երգուի Սուրբ Պսակի Խորհուրդի ընթացքին: Տառի մը անունը:

### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 398)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	հ	ա	բ	ա	տ	ո	ւ	թ	ի	ւ	ե	ք
2	ա	ե	է			ա				օ	ն	
3	յ	ա	ե	գ		ե	ա	ն	հ	ի	կ	լ
4	ո	յ	ա		ի	ք		ք	ա	կ	ր	ե
5	ք	ե	կ	ա	ա	ա	2		ի		ք	
6	դ	ք	ա	կ	ա	ն	ե	ա	է	ք		
7	ի	ն		լ	ի	ա	ն	ա	լ			
8	ն			ի	ի	ա	կ		ա	ա	պ	
9	ե	չ		լ	ա	ն	ի	ա	վ	ք	ա	
10	ք	ո	պ	է		ի	ք	ա	մ	ա	տ	
11		ա	ա	ա	լ			ք	է	ն		
12	գ	ա	բ	ե	գ	ի	ն	ժ	դ	ե	հ	

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի  
25/7



24° 38°

Երեքշաբթի  
26/7



24° 39°

Չորեքշաբթի  
27/7



24° 39°

Հինգշաբթի  
28/7



24° 40°

Ուրբաթ  
29/7



25° 41°

Շաբաթ  
30/7



25° 41°

Կիրակի  
31/7



24° 41°



## ՆՈՐՑ ՄԻԱԲԱՆ ՀՈԳՇ. Տ. ԱՌԱՔԷԼ ԱԲՂ ՎԱՏԵՇՃԵԱՆԻ ԱԲԵՂԱՅԱԿԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԴԱՏԱՐԱԳՐԸ ԻՐ ԾՆԵՂԱՎԱՅՐԷՆ ՆԵՐՍ

Հանդիսապետութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանի, Կիրակի, 17 Յուլիս 2022-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նորոժ միաբաններէն Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատեհճեան իր ծննդավայրէն՝ Հալեպէն ներս, անդրանկի արե-



ղայական Սուրբ Եւ Ամմահ Պատարագ մատուցեց, Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ: Պատարագին ներկայ գտնուեցան Ազգ. Վարչութեան անդամներ, նորոժ Հայր Սուրբին ծնողքն ու հարազատները եւ մեծաթիւ հաւատացեալներ:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան արժանընտիր գահակալ ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին հրամանով եւ օրհնութեամբ, անցնող ամիսներուն Դպրեվանքի շրջանաւարտ Հայր Առաքել արեղայ ձեռնադրուեցաւ, մաս կազմելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միաբաններուն:

Սուրբ Պատարագի ընթացքին, ներկաներուն հոգիները բերկրանքով լեցուեցան՝ ի տես Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի ուսման տարիները աւարտած հալեպահայ Հայր Առաքելին պատրաստութիւնն ու նուիրութիւնը՝ ծառայելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ:

Պատարագի հոգեպարար երգեցողութիւնը կատարեց եկեղեցւոյ դպրաց դասը, ղեկավարութեամբ՝ դպրապետ Բարշ. Բժշկ. Սարգիս Սրկ. Իսկէնեանի:

Հալեպի մէջ իր անդրանկի քարոզի սկզբնաւորութեան, Հայր Առաքել փառք եւ գոհութիւն վերառաքեց Աստուծոյ, իր շնորհած բարիքներուն համար: Ան իր որդիական ուրախութիւնն ու երախտագիտութիւնը յայտնեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին՝ Դպրեվանքէն ներս ուսման տարիներուն իր հայրական հոգածութեան հա-



մար: Հայր Առաքել շնորհակալութեան խօսք ուղղեց նաեւ Թեմիս Առաջնորդ Սրբազան Զօր, որուն տնօրինումով եւ քաջալերանքով այսօրուան Պատարագը մատուցեց:

Վերջապէս, ան շնորհակալական խօսք ուղղեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ Զահանայ Հայրերուն, Թաղական Խորհուրդին, Դպրաց Դասին եւ բոլոր մարմիններուն իրենց հիւրընկալութեան համար:

Օրուան քարոզին բնաբանն էր Բերթեզ դայի անդամալոյծին բժըշկութեան դրուագին մէջ անդամալոյծին հետեւեալ խօսքը. «Տէ՛ր, մէկը չուկիմ»: Հայր Սուրբը ներկայ հաւատացեալներուն պարզաբանելով աստուածաշնչական հատուածը, բարձրաձայն խորհրդածութեամբ հետեւեալ երկու կէտերը մատնանշեց. ա. «Տէ՛ր, մէկը չուկիմ»:

Հայր Սուրբը դիտել տուաւ, որ մարդու եւութիւնը փշաքաղող եւ սիրտը ճմլող այս արտայայտութիւնը կու գայ տառապող եւ տանջուող անձէ մը, որ 38 տարիներէ ի վեր անդամալոյծ էր, կը չարչարէր:

Շար. Էջ 6

## ՔԵՏԱՊԻ ԱԶՎԱՅԻՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐԱԾ ՄԻԱՅԵԱԼ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՍՎԵՐՋԻ ՀԱՆՂԵՍ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Եպս. Չօպուեանի, Շաբաթ, 9 Յուլիս 2022-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Քեսապի «Սարդարապատ» սրահին մէջ տեղի ունեցաւ Ազգային Ուսումնասիրաց Միացեալ Ճեմարանի ԺԲ. Եւ Թ. կարգերու ամավերջի հանդէսն ու վկայականաց բաշխումը:

Հանդիսութեան ներկայ էին՝

սապ քառամիասնութիւնը ուշադրութեան տակ առնող:

Ճեմարանի տնօրէն Վարուժան Փանոսեան ներկայացուց 2021-2022 տարեշրջանի տեղեկագիրը, որուն մէջ անդրադարձաւ աշակերտութեան թուային պատկերին, ուսուցչական կազմին, տարեշրջանի ընթացքին տարուած աշխատանքներուն եւ աշակերտութեան գործունէութեան, ապա հոգաբարձութեան



Հալեպէն ժամանած Տէր Մաշտոց քինյ. Արապաթեան, Քեսապի Հայ Առաքելական Համայնքի հովիւ պատուելի Շանթ Ակիշեան, Հայ Կաթողիկէ Ժողովրդապետ Հայր Նարեկ վրդ. Լուիսեան, Քեսապի գիւղապետ Վազգէն Չափարեան, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ասպետ» շքանակակիր, քեսապցի Սեպուհ Մանճիկեան, Համազգայինի Կերտնական Վարչութեան անդամ Կարօ Մանճիկեան, միութիւններու ներկայացուցիչներ, ծնողներ, ճեմարա-

տեմնապետ Նշան Լևոնեան հոգաբարձութեան խօսքը ուղղեց, շնորհակալութիւն յայտնելով Սրբազան Զօր, որ միշտ նեցուկ կանգնած է ճեմարանին, ինչպէս նաեւ շնորհակալութիւն յայտնեց ճեմարանի բարերարներուն եւ նուիրատուներուն:

Նախքան վկայականաց բաշխումը տեղի ունեցաւ ճեմարանի խորհրդանիշներու փոխանցում նախ՝ գիտութիւն, հաւատարմութիւն, նուիրում նշանաբաններով



նի մեծ ընտանիքը եւ քեսապահայ հոծ բազմութիւն մը:

Հանդիսութիւնը սկսաւ Սուրհական Արաբական Հանրապետութեան եւ Հայաստանի Հանրապետութեան օրհներգներով, որոնցմէ ետք մէկ վայրկեան յոտնակայս լռութեամբ հանդիսատեսը յարգեց յիշատակը հայրենիքի համար գոհուած անցելի եւ ներկայի նահատակներուն:

Հայրերն բացման խօսք արտասանեց ԺԲ. կարգէն Կարեն Սաղոնճեան, իսկ արաբերէն՝ Ալիք Զորթմուսեան, որմէ ետք սկիզբ առաւ գեղարուեստական յայտագիրը:

Թ. կարգէն աշակերտուհիներ ներկայացուցին արաբերէն խմբային արտասանութիւն մը:

Թ. Եւ ԺԲ. կարգերէն վկայուողները ներկայացուցին «Քառաձայն Յաղթական Հայերգութիւն» խորագրով պատկերներու շարք մը՝ Հայաստան, Արցախ, Սփիւռք եւ Զե-

ճեմարանի դրօշին, ապա գիտութեան, կրթութեան եւ մշակոյթի լոյսի խորհրդանիշ կանթեղին:

Որպէս հուսք բանք շրջանաւարտները ներկայացուցին իրենց սրտի խօսքը, իսկ դասարանի անունով ուղերձ ընթերցեց Սեւան Զելեպեան:

Ապա տեղի ունեցաւ վկայականաց բաշխումը, վկայեալ սերունդը կոչուեցաւ «Արցախ»:

Պարգեւատրուեցան ԺԲ. Եւ Թ. կարգերուն հայերէն դասանիւթի առաջնակարգ աշակերտները, իսկ շրջանաւարտները նուէր ստացան արցախցի պարմանուհի Ժասմին Հայրապետեանի (Հրաշագործ Նուսէ) հեքիաթային վիպակը:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ ճեմարանի քայլերգով եւ Տէր Զօր սրտի խօսքով ու «Պահպանիչ» արօթքով:

Թղթակից